

«Հ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

(«Հ պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/2025թ. տարեկան/

Ծրագրի հերթական համարը	Նպատակը	Միջոցառումների անվանումը	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում և համայնքային ծառայության համակարգի զարգացում	1.2 Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում /2021-2025 թվականներ (շարունակական)/	«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը քննարկվում է ՀՀ ՏԿԵՆ-ում: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին		

			<p>օրինակելի կանոնակարգը հաստատելու մասին» N 11-Ն հրամանով հաստատվել է համայնքների աշխատակազմերի կարգապահական ներքին օրինակելի նոր կանոնակարգը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 64-Լ հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայողների 2025 թվականի վերապատրաստման ծրագիրը: 2025 թվականին մշակվել և հաստատվել է համայնքների աշխատակազմերի անձնակազմի կառավարման, ինչպես նաև քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտի գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների վերապատրաստման ոլորտային ծրագրեր, որի շրջանակներում 2026 թվականին նախատեսվում է վերապատրաստել 200 համայնքային ծառայող:</p>		
2	<p>Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում</p>	<p>2.1. Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում /2021-2026թթ./</p>	<p>Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացման արդյունքում ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի 13 սահմանամերձ համայնքների 82 բնակավայրերի բնակիչներին ՀՀ պետական</p>		

			<p>բյուջեից տրամադրվել է աջակցություն՝ էլեկտրաէներգիայի, բնական գազի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոհատուցման, անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցման նպատակով՝ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի 1444-Ն որոշման շրջանակներում: Սահմանամերձ համայնքների բնակիչների աջակցության ընդհանուր գումարը 2025թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ կազմել է 1,016,638.2 հազար դրամ:</p>		
		<p>2.2 «Հայաստանի Հանրապետության 2022-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը /2022-թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ/</p>	<p>«ՀՀ 2025-2030թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակը 16.05.2025թ. թիվ ԴԽ/15.2/16382-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>		

<p>4</p>	<p>Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ենթակառուցվածքների զարգացում</p>	<p>4.1 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում /2021-2026թթ./</p>	<p>Սուբվենցիոն ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու, այդ թվում՝ առաջնահերթ ոլորտների, ՀՀ պետական բյուջեներից համաֆինանսավորման չափաբաժինների, սուբվենցիայի փաթեթների ներկայացման և քննարկման ժամկետների հստակեցման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 11.09.2025թ. թիվ 1311-Ն որոշմամբ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 16.11.2006թ. թիվ 1708-Ն որոշման մեջ:</p> <p>2025 թվականի սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում ուսումնասիրվել և նախապատրաստվել են սուբվենցիոն ամբողջական փաթեթներ, որոնք քննարկվել սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի թվով հինգ նիստերում և քննարկման արդյունքներով հավանության է արժանացել սուբվենցիայի 204 ծրագիր՝ 103,47 մլրդ. դրամ ընդհանուր արժեքով և 54,69 մլրդ. դրամ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ:</p> <p>2025 թվականի ընթացքում իրականացվել են ինչպես 2025 թվականին հաստատված, այնպես էլ 2022, 2023 և 2024 թվականներին հաստատված և շարունակվող ծրագրերը:</p>		
----------	--	--	--	--	--

			Սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորման համար մշակվել և ՀՀ կառավարության թվով 14 որոշումներով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեից հատկացվել է 33,635 մլրդ. դրամ՝ 445 ենթածրագրի համար:		
5	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում	5.2 Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում /2022-2026թթ./	<p>ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում կառուցվել է հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրը՝ ենթակառուցվածքների ներառմամբ: Պաշտոնական շահագործման մեկնարկը տրվել է 2025 թվականի հուլիսի 8-ին:</p> <p>ՀՀ կառավարության 04.01.2024թ. թիվ 27-Ն որոշմամբ հաստատված ՀՀ տարածքում գոյություն ունեցող և գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման ու փակման նվազագույն նորմերի համաձայն՝ ՀՀ համայնքներում իրականացվել են գործող աղբավայրերի բարեկարգման աշխատանքներ, մասնավորապես մշակվել են աղբավայրի շահագործման պլաններ, բարեկարգվում են աղբավայրերի տարածքներ՝ ցանկապատվել, եզրագծով ծառատներ կազմակերպվել և այլն :</p> <p>Իսկ փակման ենթակա աղբավայրերի մասով՝ համայնքներում արդեն իսկ</p>		

			<p>փակվել է շուրջ 100 աղբավայր և աղբանոց, հաշվի առնելով, որ համայնքների միավորման գործընթացից հետո աղբի փոխադրումն ու տեղադրումն իրականացվում է հիմնականում կենտրոնացված ձևով:</p> <p>Մասնավորապես 2025 թվականի փակվել է շուրջ 15 աղբավայր, ինչպես նաև չի շահագործվում ևս 8 աղբավայր: Բարեկարգման աշխատանքներ են տարվել թվով 41 աղբավայրերում.</p> <p>մասնավորապես՝ դեպի աղբավայր մոտեցող ճանապարհների նորոգում և բարեկարգում, սահմանազատման աշխատանքներ, ցանկապատերի տեղադրում, սանիտարական գոտիների, հարակից տարածքների ու ճանապարհների մաքրում, հակահրդեհային միջոցների կիրառում, ուղեփակոցների տեղադրում, աղբի բեռնաթափման համար եռաշերտ հարթակների կառուցում, տարածքների կանաչապատում, աղբավայրերում առկա աղբի տոփանում, հարթեցում, հողով ծածկում:</p>		
--	--	--	---	--	--

		<p>5.3 Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում /2022-2026թթ./</p>	<p>ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար աղբահանության «խելացի» սխեմաները, այդ թվում՝ ելնելով հաշվարկված գոյացող աղբի քանակից՝ յուրաքանչյուր բնակավայրում աղբամանների քանակի ու տեղադիրքերի, աղբատար մեքենաների քանակի ու տեսակի և արդյունավետ երթուղիների ներառմամբ, որը կիրառվում է 2025թ. հուլիս ամսվանից:</p> <p>Դրա հետ մեկտեղ, հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի պատշաճ հավաքման, հեռացման ու վերամշակման գործընթացների ապահովման նպատակով նախաձեռնվել է «Հանրապետության տարածքում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգի ներդրում» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել առավելագույնը 4 սանիտարական աղբավայր, փոխաբեռնման կայաններ, վերամշակման գործարաններ և ապահովել լոգիստիկան: Հիմք ընդունելով ՎՋԵԲ-ի աջակցությամբ 2023-2024թթ. իրականացված «ՀՀ 8 մարզերում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգի ներդրման» ծրագրի նախնական ուսումնասիրությունն ու</p>		
--	--	--	--	--	--

			<p>առաջարկությունները՝ մշակվել և ՀՀ կառավարության 13.02.2025թ. թիվ 143-Լ որոշմամբ հաստատվել է Աղբահանության ռազմավարության կիրարկումն ապահովող 2025-2032թթ. միջոցառումների ծրագիրը, որով ամրագրվել են հանրապետության տարածքի հյուսիսային, կենտրոնական և հարավային գոտիներում ներդրումային ծրագրերի միջոցառումները: Միաժամանակ, հաշվի առնելով հանրապետության կենտրոնական հատվածում թափոնների համապարփակ կառավարման և ենթակառուցվածքների բարեփոխումների հրատապ անհրաժեշտությունը, առաջարկվել է Միջոցառումների ծրագրով կենտրոնական գոտում նախատեսված աշխատանքների համատեքստում դիտարկել նաև Երևանի աղբահանության համակարգի բարելավման խնդիրները և ըստ այդմ նախատեսվում է ծրագիրն իրականացնել հանրապետության ողջ տարածքի համար՝ ընդգրկելով Երևան համայնքը: Հաշվի առնելով, որ նշված ներդրումաին ծրագրերի իրականացման համար հետաքրքրված են մի շարք միջազգային ֆինանսական կառույցներ՝ ՎՋԵԲ, ԱՋԲ, ՀԲ, ՋՖԳ և 2025 թվականի ընթացքում բազմաթիվ քննարկումների</p>		
--	--	--	---	--	--

			<p>արդյունքներով վերջիններիս կողմից տրվել է համաձայնություն վերոհիշյալ ծրագրի իրականացման աջակցության մասով և պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը կիրականացվի ՎՋԵԲ-ի աջակցությամբ</p> <p>Կենտրոնական գոտու մաս կազմող Երևան համայնքի կոշտ թափոնների կառավարման տեխնիկատնտեսական ուսումնասիրության նպատակով խորհրդատուների ընտրության համար մրցույթը ՎՋԵԲ-ի կողմից հայտարարվել է ս.թ. դեկտեբերի 9-ին, հայտերի ներկայացման ժամկետ է սահմանվել 2026 թվականի հունվարի 16-ը, իսկ հանրապետության մնացած գոտիների մասով մրցույթը կհայտարարվի մինչև տարեվերջ:</p> <p>Հարկ է նշել, որ հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման և անվտանգ հեռացման ու վերամշակման կայուն համակարգի ներդրման նպատակով աշխարհագրական գոտիավորված տարածքներում նախատեսվում է կապիտալ ներդրումային ծրագրերի իրականացում՝</p> <ul style="list-style-type: none">- 3 կամ 4 սանիտարական աղբավայրերի կառուցում- 8- 12 փոխաբեռնման կայանների կառուցում		
--	--	--	--	--	--

			<ul style="list-style-type: none"> - աղբահանության արդյունավետ սխեմաների կիրառում - աղբի տեսակավորված հավաքման համակարգի ներդրում - աղբի վերամշակման գործարանների կառուցում - անհրաժեշտ մեքենասարքավորումների ձեռքբերում <p>Դրա հետ մեկտեղ, միջազգային գործընկերների հետ իրականացվում են ծրագրեր՝ ուղղված աղբի տեսակավորված հավաքմանն ու վերամշակման հնարավորությունների ներդրմանը: Մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - Իրականացման փուլում է գտնվում Շվեդական SIDA-ի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի թափոնների կառավարման քաղաքականության իրագործման բարելավում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են ընտրված փորձնական համայնքում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում տեսակավորված աղբի հավաքման մոդելի կիրառմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես մշակվել է թափոնների կանխարգելման, ինչպես նաև սկզբնաղբյուրում աղբի տեսակավորման ազգային մոդել և ձեռք են բերվել անհրաժեշտ աղբամաններն ու հատուկ աղբատար մեքենան, 		
--	--	--	--	--	--

			<p>իրականացվել իրազեկման լայնածավալ աշխատանքներ: Ծրագրի մեկնարկը տրվել է ս.թ. օգոստոս ամսին:</p> <p>Արտադրողի Ընդլայնված պատասխանատվության գործիքակազմի կիրառման մասով Հրագրան համայնքում իրականացվում է փորձնական ծրագիր՝ ստեղծելով փաթեթավորման թափոնների առանձին հավաքման ու վերամշակման ենթակառուցվածքներ և կիրառելով ԱԸՊ մեխանիզմները: Ծրագրի շրջանակներում հիմնվել է «Էկո-Պակ Հայաստան Արտադրողների Պատասխանատվություն» հիմնադրամը, որի հիմնադիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> -«Կոկա-Կոլա Հելենիկ Բոթլինգ Արմենիա» ՓԲԸ, -«Ջերմուկ Ինթերնեշնլ Պեպսի Կոլա Բոթլեր» ՍՊԸ և - «Երևանի կոնյակի Ընկերություն» ՓԲԸ: <p>Ծրագրի պաշտոնական մեկնարկը տրվել է ս.թ. հոկտեմբեր ամսին:</p>		
		<p>5.4 ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ</p>	<p>Աղբահանության ռազմավարության նոր միջոցառումների ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 13.02.2025թ. թիվ 143-Ն որոշմամբ, որով մանրամասն ամրագրվել են Հայաստանի տարածքի 3 գոտիների</p>		

		վարչապետի աշխատակազմ /2024 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ/	ինտեգրված աղբահանության համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումները և ժամանակացույցերը:		
8	Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, լիազորությունների ապակենտրոնացում	8.4 «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր խմբագրությամբ նախագծի ներկայացումը Վարչապետի Աշխատակազմ /2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/	Մշակվել և ՏԿԵ նախարարի 21.10.2025թ.-ի N°ԴԽ/14.1/36059-2025 գրությամբ Վարչապետի աշխակազմ է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը		
9	Միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի ներդրում	9.1 «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում:	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող նախագծում ներառվել է «ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ» գլուխը, որտեղ նկարագրված են միջհամայնքային միավորումները, դրանց ստեղծումը և լուծարումը, ինչպես նաև միջհամայնքային համագործակցության ձևերը: Այն չէր կարող առանձին ներկայացվել Վարչապետի աշխատակազմ, քանի որ հանդիսանում է 8.4-րդ կետով նախատեսված նախագծի բաղկացուցիչ մաս և ներկայացվել է ՏԿԵ նախարարի 21.10.2025թ.-ի N°ԴԽ/14.1/36059-2025 գրությամբ:		

		<p>9.2 Օրենքով միավորում ստեղծելու վերաբերյալ օրենսդրական փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: /2022-2026թթ./</p>	<p>Մշակվել են «Միջհամայնքային համագործակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային դրույթները:</p>		
10	<p>Հանքարդյունաբերության ոլորտում միասնական և համապարփակ քաղաքականության վարում</p>	<p>10.2 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող այլ իրավական ակտերի մշակում /2024-2026թթ./</p>	<p>ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի «Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 477-Ն որոշում (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191495), որով սահմանվել է ՀՀ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով համաձայնության հայցման և տրամադրման կարգը: ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 994-Ն որոշում (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194552 (ռեզիսիվ երկրաբանական բնույթի</p>		

			<p>ուսումնասիրությունների նպատակով համաձայնության տրամադրման պայմանների և պահանջների իրավական կարգավորում):</p> <p>ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի «ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1246-Լ որոշում (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196180):</p> <p>2025 թվականի հունվարի 27-ին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի թիվ 05-Ն հրամանով փոփոխություն է կատարվել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 249-Ն հրամանում (https://www.arlis.am/hy/acts/202658/latest):</p> <p>Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով 2025 թվականի մայիսի 20-ին ՏԿԵ նախարարի 950-Ա հրամանով (https://mtad.am/search?q=950-%D4%B1) Կառավարության, ընդերքօգտագործող</p>	
--	--	--	--	--

			<p>կազմակերպությունների և գիտական հանրության միջև համագործակցության համար ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ: 2025 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքները (https://www.arlis.am/hy/acts/217645): Ընդունված օրենքները բխում են ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության նպատակներից և միտված են դրա գործնական իրականացմանը, մասնավորապես՝ սահմանային և ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում ընդերքօգտագործման նկատմամբ պետական վերահսկողության խստացմանը, թվային վերահսկողական գործիքների կիրառմամբ արդյունահանման գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության</p>	
--	--	--	---	--

			<p>բարձրացմանը, ջրային ռեսուրսների պահպանության ապահովմանը, ինչպես նաև ոլորտում իրավական պատասխանատվության և իրավական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:</p> <p>2025 թվականի մայիսի 8-ի ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 556-Ն որոշում (https://www.arlis.am/hy/acts/206681/latest): Նշված կարգավորումը բխում է ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության դրույթներից և միտված է ջրային ռեսուրսների արդյունավետ, կանխարգելիչ և կայուն կառավարման ապահովմանը: Այն կարևոր դեր ունի Հայաստանի Հանրապետությունում բնական ռեսուրսների պահպանության և կայուն զարգացման պետական քաղաքականության իրականացման համատեքստում՝</p>		
--	--	--	---	--	--

			<p>ապահովելով միջազգային ESG մոտեցումների սկզբունքներին համապատասխան կառավարում, այդ թվում՝ ռիսկերի նախնական կանխարգելման և կառավարման միջոցով:</p> <p><i>2025 թվականի ընթացքում հիմնովին լրամշակվել և շահագրգիռ պետական մարմիններին կարծիքի է ներկայացվել հողօգտագործման իրավունքի տրամադրման և հողերի ձեռքբերման գործընթացների և գործիքակազմի պարզեցման, ինչպես նաև հողօգտագործման և ընդերքօգտագործման գործընթացների ներդաշնակեցման նպատակով մշակված օրենսդրական նախաձեռնության փաթեթը, որն առաջիկայում կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:</i></p> <p>Օրենսդրական նախաձեռնությունը քննարկվել է ԲՇԽ հանքարդյունահանող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:</p> <p>Մշակված նախագծերի ընդունման արդյունքում կձևավորվի իրավական</p>		
--	--	--	--	--	--

			<p>միասնական համակարգ, որի արդյունքում կներդրվի ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման, հողատկացման և նպատակային նշանակության փոփոխման փոխկապակցված մեխանիզմներ, ինչն իր ազդեցությունը կունենա նաև ներդրումային գրավիչ միջավայր ձևավորելու համատեքստում:</p> <p><i>Մշակվել է «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջեի մասին համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:</i></p> <p>Մշակված նախագծով հստակեցվում են օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող սուբյեկտների համար ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված՝ սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած</p>		
--	--	--	--	--	--

			<p>պարտավորությունների չափերը և օգտակար հանաճոյի տեսակից կախված կիրառվում են համանման մոտեցումներ՝ սահմանելով ընդերքօգտագործող ընկերությունների սոցիալական պարտավորությունների ձևավորման միասնական չափանիշներ: Օրենսդրական նախաձեռնությունը միտում ունի նպաստել համայնքային բյուջեների ավելացմանը՝ ապահովելով համայնքների կայուն սոցիալական զարգացման հնարավորություններ: Նախագիծն ենթարկվել է կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ):</p>		
11.	<p>ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ն ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական)</p>	<p>11.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում, ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում /2023-2026թթ./</p>	<p>2025թ. ԱՃԹՆ 6-րդ ազգային զեկույցը հրապարակվել է EITI.am կայքում:</p>		

20	20. Ընդերքի մասին տեղեկության թվային կադաստրի ստեղծում	20.2 ՕՀՊԿ և ՕՀՊՊՀ ԱԿՏՀի ստեղծման, վարման և պահպանման ներդրման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների՝ ՏԿԵ նախարարությանը վերապահված միջոցառումների իրականացում:	2025 թվականի ընթացքում մշակվել է «Հանքարդյունաբերության ոլորտում համապարփակ թվայնացման իրականացում» բիզնես քեյսը, որը ներառում է նաև նշյալ միջոցառմամբ նախատեսված՝ օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների)՝ պետական կադաստրի (ՕՀՊԿ) և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի (ՕՀՊՊՀ) վարման ավտոմատ կառավարման տեղեկատվական հարթակների (ԱԿՏՀ) ստեղծման, վարման և պահպանման ներդրման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների իրականացումը: Բիզնես քեյսը աշխատանքային կարգով քննարկվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի ներկայացուցիչների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ: «Հանքարդյունաբերության ոլորտում համապարփակ թվայնացման իրականացում» բիզնես քեյսն ու վերջինիս սահիկաշարը սույն թվականի դեկտեմբերի 12-ին ներկայացվել է ՀՀ փոխվարչապետ Մ .		
----	--	---	---	--	--

			Գրիգորյանի գրասենյակ՝ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի առաջիկա նիստում քննարկելու նպատակով:		
25	Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորում	25.1.3 Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքների իրականացում	2025թ. ընթացքում շարունակվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները: 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի միջպետական գծերի թողունակության հնարավորության որոշման և բաշխման և ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի շրջանակներում էլեկտրաէներգիայի (հզորության) միջպետական փոխանցման ծառայություններին մուտք գործելու կանոնները:		
		<i>ժամկետ՝ 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ փասնօրյակ</i>			

			<p>2014թ. մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված է Միության գազի ընդհանուր շուկայի փուլ առ փուլ (3 փուլով) ձևավորում (83-րդ և 104-րդ հոդվածների և 22-րդ հավելվածի համաձայն): Այդ նպատակով Պայմանագրով նախատեսված է մի շարք հիմնարար փաստաթղթերի ընդունում, այդ թվում՝ համապատասխան Հայեցակարգի, Ծրագրի, ինչպես նաև դրանց հիման վրա Գազի ընդհանուր շուկայի մասին միջազգային պայմանագրի կնքում:</p> <p>Պայմանագրով նախատեսված է, որ Միության գազի ընդհանուր շուկան կգործարկվի ոչ ուշ, քան 2025թ. հունվարի 1-ը:</p> <p>Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2024թ. դեկտեմբերի 26-ի թիվ 22 որոշմամբ ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկան սահմանվել է որպես 2025թ. հունվարի 1-ի դրությամբ գազի բնագավառում անդամ պետությունների միջև փոխհարաբերությունների համակարգ՝ ձևավորված անդամ պետությունների օրենսդրության և միջազգային պայմանների</p>		
--	--	--	---	--	--

			<p>հաշվառմամբ: Նույն որոշմամբ ԵՏՀ-ին հանձնարարվել է անդամ պետությունների հետ համատեղ մշակել Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի զարգացման ծրագիր մինչև 2030 թվականը, ինչպես նաև Եվրասիական տնտեսության միության պայմաններում փոփոխությունների նախագիծ: 2025թ. ընթացքում ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման շրջանակներում կայացել են ԵԱՏՄ անդամ պետությունների էներգետիկայի բնագավառի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի, ԵԱՏ Հանձնաժողովի կոլեգիային կից էլեկտրաէներգետիկայի, նավթի և գազի խորհրդատվական կոմիտեների, խորհրդատվական կոմիտեի էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ենթակոմիտեի և գազի շուկայի ձևավորման գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքային խմբի մի շարք նիստեր և խորհրդակցություններ:</p>		
26	Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում	26.1.3 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և	<p>Կատարված չէ:</p> <p>Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի նախագծային</p>		

		<p>ավարտական փուլի աշխատանքները</p> <p><i>Ժամկետ՝ 2022-2025 թվականներ</i></p>	<p>Ժամկետի երկարաձգման և արդիականացման աշխատանքները, մասնավորապես՝ իրականացվել և իրականացվում են՝ Տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատ կարգավորման համակարգի արդիականացման, Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարման, Գլխավոր մասնաշենքի 1,2Պ-1/Ա,Ե; Պ-3Ա,Ե; 2Պ-4Ա,Ե օդափոխման համակարգերի փոխարինման, Բորային կարգավորման հանգույցի օդափոխության համակարգերի արդիականացմանն ուղղված շինմոնտաժային և թողարկման կարգաբերման աշխատանքների կատարման, Հայկական ԱԷԿ-ի շրջանառու ջրի հովացման համակարգի թիվ 1 և թիվ 3 աշտարակների արդիականացման, Խորը գոլորշիացման տեղակայանքի արդիականացման աշխատանքները, ինչպես նաև Հայկական ԱԷԿ-ի առանձին հատկացրած տարածքում ապամոնտաժային, կառուցամոնտաժային, գործարկման, կարգաբերման աշխատանքները՝ նոր 110/220 կՎ բաց բաշխիչ</p>		
--	--	---	--	--	--

			<p>սարքավորումների (ԲԲՍ-110/220 կՎ-ի) կառուցման համար: ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ միջև 2025թ. օգոստոսի 8-ին կնքվել է 10,652 մլրդ դրամի, իսկ նույնների 10-ին՝ 2,883 մլրդ դրամի վարկային պայմանագրեր: ՀՀ կառավարության 11.06.2020թ. № 953-Ն որոշմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ Ընկերությանը 2020-2025թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող 63,2 մլրդ դրամ գումարի չափով բյուջետային վարկը տրամադրվել է ամբողջությամբ: Միջոցառման իրականացման վերջնաժամկետ էր սահմանված 2025թ. դեկտեմբերի 31-ը, սակայն միջոցառման շրջանակներում իրականացվող մրցութային գործընթացների երկարաձգմամբ, մասնավորապես բազմաթիվ գնման մրցույթների չեղարկմամբ՝ սահմանված գնից ավելի բարձր գին ներկայացնելու կամ հաղթող մասնակցի կողմից վերջնական պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու պատճառով, կապալառուների կամ մատակարարների կողմից կնքված պայմանագրերի ժամանակացույցով սահմանված ժամկետների խախտմամբ, համաշխարհային աշխարհաքաղաքական</p>	
--	--	--	--	--

			<p>իրավիճակի սրմամբ, որը հանգեցրել է առանձին տեսակի ապրանքների արտահանման-ներկրման պատժամիջոցային սահմանափակումների, պատժամիջոցների տակ գտնվող բանկերի միջոցով ֆինանսական գործարքների իրականացման արգելքների, լոգիստիկ սխեմաների /ապրանքների առաքում/ իրականացման բարդացումներով պայմանավորված, աշխատանքները կավարտվեն ուշացմամբ, աշխատանքների մի մասի իրականացումը տեղափոխվել է 2026թ.:</p> <p>Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մոտ 4,7 մլրդ դրամի աշխատանքներ:</p> <p>Միջոցառման շրջանակներում ընդհանուր իրականացվել է մոտ 51,3 մլրդ դրամի վճարումներ, որից մոտ 10,4 մլրդ դրամը ՀՀ կառավարության 02.05.2024թ. № 632-Ն որոշման համաձայն՝ տրամադրվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի կրկնակի երկարաձգման ծրագրի իրականացման համար:</p>		
27	Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային	27.1 Մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը և	Կատարված չէ:		

	<p>էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում</p>	<p>դրա իրականացումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը /2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ/</p>	<p>ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1198-Ն որոշմամբ՝ հիմնադրման միջոցով ստեղծվել է «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Ընկերությունը հաստիքներով համալրվելուց հետո պետք է ապահովի նոր էներգաբլոկի կառուցման ծրագրի իրականացումը՝ սկսած նախապատրաստումից (SSՀ-ների ուսումնասիրություն, տեխնոլոգիաների ընտրություն, SSՀ-ի վերջնականացում, ծրագրի և ժամանակացույցի մշակում) մինչև կառուցում՝ հետագայում հանդիսանալով նաև շահագործող կազմակերպություն: Ներկայումս ընթացքում է Ընկերության գործադիր մարմնի ձևավորման գործընթացը: Միջոցառումների իրականացումը կապված է Ընկերության ամբողջական կազմավորման (հաստիքների համալրման) հետ: 2025 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ ՏԿԵՆ) կողմից հայտարարվել է Ընկերության գլխավոր տնօրենի</p>		
--	---	---	--	--	--

			<p>Ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար համապատասխան մասնագետի ներգրավում՝ մինչև Ընկերության գլխավոր տնօրենի թափուր պաշտոնում մրցույթի արդյունքում նշանակումը, սակայն մրցույթը չի կայացել:</p> <p>Մինչև վերը նշված գործընթացի ավարտը ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկ կառուցելու, փոքր մոդուլյար ռեակտորներ տեղակայելու նպատակահարմարության, ինչպես նաև անհրաժեշտ տեխնոլոգիաների ընտրության նպատակով 2025 թվականին շարունակվել են քննարկումները ամերիկյան, չինական, կորեական, ռուսական ընկերությունների հետ, վերջիններից ստացվել են առաջարկներ, տեխնիկատնտեսական հիմնավորումներ:</p> <p>2025 թվականի սեպտեմբերի 22-ին ՏԿԵՆ-ի, ԱՄՆ Պետդեպարտամենտի «Sargent & Lundy» ամերիկյան ընկերության և հայկական կողմի շահագրգիռ գերատեսչությունների և ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած</p>		
--	--	--	---	--	--

			<p>հանդիպման ընթացքում ամերիկյան կողմը ներկայացրել է ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկ կառուցելու տեխնիկատնտեսական հիմնավորման փաստաթղթի վերջնական տարբերակը: Վերջինս գտնվում է ուսումնասիրման փուլում:</p> <p>2025 թվականի հոկտեմբերի 21-ին ՏԿԵՆ-ում կայացել է Հայաստանի ատոմային էներգետիկայի բնագավառի և Կորեայի Հանրապետության դեսպանության տնտեսական խորհրդական տիկին Լի Ըն Ջուի գլխավորած պատվիրակության, այդ թվում՝ կորեական «Korea Hydro & Nuclear Power Co., Ltd (KHNP)» ընկերության ներկայացուցիչների հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նպատակով կորեական կողմի ներկայացրած առաջարկը:</p> <p>Համաձայն հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ նախատեսվում է վերոնշյալ ընկերության ներկայացուցիչների այցը Հայաստան՝ կորեական առաջարկի շուրջ մասնագիտական քննարկում անցկացնելու նպատակով:</p>		
--	--	--	--	--	--

			<p>2025 թվականի նոյեմբերի 25-ին ՏԿԵՆ-ում կայացել է հանդիպում Հայաստանի ատոմային էներգետիկայի բնագավառի և Չինաստանի ազգային միջուկային կորպորացիայի (CNNC) և վերջինիս դուստր ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որին ներկա է գտնվել նաև Չինաստանի դեսպանատան ներկայացուցիչը:</p> <p>Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ում փոքր մոդուլյար ռեակտորների տեղակայման նպատակով իրականացվող գործընթացները՝ կարևորելով վերջինիս շրջանակներում չինական կողմից առաջարկի ստացումը: Համաձայն հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ հայկական կողմն աշխատանքային կարգով CNNC-ին կներկայացնի համապատասխան հարցաշար, որը դիտարկելուց հետո չինական կողմը հանդես կգա առաջարկով՝ ներկայացնելով նաև վերոնշյալ հարցաշարով հայցվող տեղեկատվությունը:</p> <p>2025 թվականի դեկտեմբերին ռուսական «Ռոսատոմ» Պետական կորպորացիայի կազմում գործող «Ռոսատոմ էներջի պրոջեքթս» ԲԸ-ի կողմից ստացվել է առաջարկ՝</p>		
--	--	--	--	--	--

			<p>դիտարկելու ՀՀ-ում մեծ (1200 ՄՎտ), միջին (600 ՄՎտ) և փոքր հզորության (6 էներգաբլոկ՝ ընդհանուր 330 ՄՎտ հզորությամբ) ատոմային էլեկտրակայանների կառուցման հնարավորությունը: Ռուսական կողմը պատրաստել և ՏԿԵՆ է ներկայացել ՀՀ տարածքում ՓՄՌ-ով (փոքր մոդուլյար ռեակտորներ) կայանի կառուցման նախագծի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում՝ կից նյութերով, որը ներկայացվել է ատոմային էներգետիկայի բնագավառի մասնագիտացված կազմակերպություններին՝ դիրքորոշում և նկատառումներ ստանալու նպատակով:</p>		
28	<p>Էներգետիկ ենթակառուցվածքների վերազինում, արդիականացում, առաջատար տեխնոլոգիաներով հագեցման աշխատանքներ</p>	<p>28.3.2 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները</p> <p><i>Ժամկետ՝ 2023-2024 թվականներ</i></p>	<p>Միջոցառման շրջանակներում ավարտվել են 220/110/10 կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման աշխատանքները, ենթակայանը սահմանված կարգով ամբողջությամբ դրվել է լարման տակ և շահագործվում է: Պայմանավորված կադաստրային քարտեզների և ենթակայանի սեփականության վկայականում ներառված տվյալների անհամապատասխանությամբ, իրականացվում է փաստաթղթավորման գործընթաց:</p>		

		<p>28.4.2 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները</p> <p><i>Ժամկետ՝ 2023-2024 թվականներ</i></p>	<p>Միջոցառման շրջանակներում ավարտվել են 220/110/6 կՎ «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման աշխատանքները, ենթակայանը սահմանված կարգով ամբողջությամբ դրվել է լարման տակ և շահագործվում է:</p> <p>Պայմանավորված կադաստրային քարտեզների և ենթակայանի սեփականության վկայականում ներառված տվյալների անհամապատասխանությամբ, իրականացվում է փաստաթղթավորման գործընթաց:</p>		
--	--	---	--	--	--

29	<p>Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (Հայաստան - Իրան-Վրաստան-Ռուսաստան) քառակողմ նախաձեռնության հետ կապված աշխատանքների իրականացում</p>	<p>29.1.3 Տեխնիկական և իրավական հարցերի համադրում և ներդաշնակեցում</p> <p><i>Ժամկետ՝ 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</i></p>	<p>Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան) նախաձեռնության իրականացման նպատակով շարունակվել են աշխատանքները նախաձեռնության խոհրդատուի կողմից մշակվել է նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում, սակայն դեռևս կողմերի միջև չի համաձայնեցվել՝ կապված քաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումներով:</p> <p>2025թ-ի ընթացքում շարունակվել են Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և «Նորավան» ենթակայանի կառուցման աշխատանքները: Աշխատանքներն ամբողջությամբ նախատեսվում է ավարտել 2026 թվականին:</p>		
30	<p>Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում</p>	<p>30.1.2 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ</p>	<p>Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները. Կառուցվող էլեկտրահաղորդման օդային գծի երկարությունը մոտ 268 կմ է: Միջոցառման շրջանակներում նախատեսված 711 հենարանից բետոնացվել է 700 հենարանի հիմք, մոնտաժվել 633-ը, իրականացվել են մոտ 76 կմ հաղորդալարերի մոնտաժման և</p>		

		<p>30.2 Շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը /2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ/</p>	<p>լարածգման աշխատանքներ: Ամբողջությամբ ներմուծվել են անհրաժեշտ բոլոր հենարանները, ամպրոպապաշտպան ճոպանը և օպտիկամանրաթելային մալուխը: Իրականացվել են դեպի հենարաններ տանող մոտեցման ճանապարհների շինարարության, հենարանների հիմքերի բետոնացման և հենարանների մոնտաժման աշխատանքներ: «Նորավան» ենթակայանում աշխատանքներն ավարտվել են մոտ 90 %-ով: Ներմուծվել են 200 ՄՎԱ հզորությամբ մեկ ավտոտրանսֆորմատորի իրանը՝ ներառյալ ակտիվ մասը, ինչպես նաև 2025թ. սեպտեմբերի 30-ին միջոցառումն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) և միջոցառման իրականացման կապալառու «Սանիր» ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև ստորագրված Համաձայնագիր N 13-ի շրջանակներում՝ գողությունների, նախագծային փոփոխությունների, աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրների արդյունքում հենարանների մասերը՝ 26500 կգ քաշով: Միջոցառման իրականացման տեղանքներում աշխատանքները դադարեցված են: Կապալառուի ներկայացված պարզաբանմամբ ստեղծված</p>		
--	--	--	--	--	--

			<p>իրավիճակը պայմանավորված է ընկերությունում առկա ֆինանսական խնդիրներով:</p> <p>Միջոցառման իրականացման սկզբից մինչև հաշվետու ժամանակահատվածը Կապալառուին վճարվել է մոտ 90,1 մլն եվրո գումար, այդ թվում՝ էլեկտրահաղորդման օդային գծի մասով՝ մոտ 61,5 եվրո, «Նորավան» ենթակայանի մասով՝ մոտ 28,6 մլն եվրո: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիի, Ընկերության և Կապալառուի ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց արդյունքում միջոցառման ֆինանսական հոսքերն ակտիվացնելու, ինչպես նաև միջոցառման առաջընթացն ապահովելու նպատակով Ընկերությունն Իրանի արտահանման զարգացման բանկի վարկային և Ընկերության սեփական միջոցներից Կապալառուին պարբերաբար տրամադրել է կանխավճարներ և փոխառություն՝ ընդհանուր 10,9 մլն եվրոյի չափով, որն ամբողջությամբ չի մարվել, և մնացորդը կազմում է 1,48 մլն եվրո, ինչպես նաև Ընկերությունը</p>		
--	--	--	--	--	--

			<p>11,39 մլն եվրո գումար տրամադրել է Կապալառուին՝ «Սանիր հնթերնեյշնլ ՖՁԵ» ընկերության կողմից տրամադրված փոխառության մայր գումարից վաղաժամ մարման սկզբունքով՝ կնքելով եռակողմ համաձայնագրեր: 400/220/20 կՎ 200 ՄՎԱ հզորությամբ ավտոտրանսֆորմատորների իրանի՝ ներառյալ ակտիվ մասի և բեռի տակ լարման կարգավորիչները ձեռք բերելու նպատակով ՀՀ կառավարության 21.11.2024թ. № 1840-Ն և 14.08.2025թ. № 1127-Ն որոշումներով Ընկերությանը տրամադրվել է 2,07 մլրդ դրամ գումարի չափով բյուջետային վարկ (մոտ 4,6 մլն եվրո), որից 2024թ.՝ 1,035 մլրդ դրամ և 2025թ.՝ 1,035 մլրդ դրամ: 2024թ. դեկտեմբերի 20-ին Կապալառուին վճարվել է 2,3 մլն եվրո գումար, իսկ 2025թ. սեպտեմբերի 2-ին վճարվել է 1,84 մլն եվրո գումար: Մնացորդային 460 հազ. եվրո գումարը կվճարվի ավտոտրանսֆորմատորները ենթակայան տեղափոխելուց հետո 30 օրվա ընթացքում: Նշված գումարները Կապալառուին վճարման պահից համարվել է մարված՝ Ընկերության և «Սանիր հնթերնեյշնլ ՖՁԵ» ընկերության միջև կնքված Փոխառության</p>		
--	--	--	--	--	--

			<p>պայմանագրի շրջանակներում «Սանիր Ինթերնեյշնլ ՖՁԵ» ընկերության կողմից Ընկերությանը տրամադրված փոխառությունից վերադարձման ենթակա հիմնական (մայր) գումարից: Միջոցառման իրականացման վերջնաժամկետ էր սահմանված 2025թ. դեկտեմբերի 31-ը, սակայն Կապալառուն դիմել է Ընկերությանը միջոցառման իրականացման վերջնաժամկետը մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգելու համար՝ հիմնվելով հետևյալ դիտարկումների և հիմնավորումների վրա, մասնավորապես՝ գողության և վանդալիզմի բազմաթիվ միջադեպերով, որոնք էլեկտրահաղորդման ծրագծի և «Նորավան» ենթակայանի տարածքում առաջացրել են անկանխատեսելի ուշացումներ և լրացուցիչ վերականգնողական ջանքեր, տարածաշրջանային հակամարտությունների պատճառով առաջացած շարունակական խափանումները, որոնք բացասաբար են ազդել լոգիստիկայի, աշխատուժի մոբիլիզացման և միջոցառման իրականացման կարողությունների վրա, ինչպես նաև Հայաստանում խիստ և երկարատև ծմեռային պայմանները, որոնք սահմանափակում են</p>		
--	--	--	--	--	--

			<p>աշխատանքային շինարարական սեզոնի տևողությունը, ինչը հանգեցնում է արդյունավետ ժամանակի անխուսափելի կորստի: Հաշվի առնելով միջոցառման կարևորությունը, ինչպես նաև դրա իրականացման վերաբերյալ երկու երկրների կառավարությունների միջև պայմանավորվածությունները՝ սահմանված կարգով իրականացվում է միջոցառման իրականացման վերջնաժամկետը 8 ամսով երկարաձգելու գործընթաց: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026թ.:</p>		
32	<p>Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում</p>	<p>32.2 «Այգ-1 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում /2026 թվական, շարունակական/</p>	<p>ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 25-ի N1167-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Հայաստանում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև «ԱՅԳ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր), որով կայանի «Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը» սահմանվել է «2025 թվականի դեկտեմբերի 1-ը»:</p>		
		<p>32.2.2 «Այգ-1» 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ /2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/</p>			

			<p>Սակայն, պայմանավորված այն փաստով, որ Համաձայնագրի բազմաթիվ կետերի կատարումն անմիջականորեն կապված են «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ANIF) հետ՝ 20.06.2025թ.-ի ՀՀ կառավարության N 803-Ա որոշմամբ հիմնադրվել է «Արևային էներգետիկայի զարգացման» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև «Այգ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մասին ծրագրի իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ «Մասդար Արմենիա 1» ՓԲԸ-ում ունեցած 15% բաժնեմասը արդյունավետ կառավարելու նպատակով:</p> <p>ՀՀ կառավարության 20.06.2025 թվականի «29.08.2024 թվականի N 1391-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 804-Ա որոշման համաձայն՝</p>	
--	--	--	--	--

			<p>1. «Մասդար Հայաստան 1» փակ բաժնետիրական ընկերության 15 տոկոս բաժնետոմսերը պետք է ներդրվեն Ընկերության կանոնադրական կապիտալում,</p> <p>2. N 1391-Ա որոշման N 1 հավելվածում ընդգրկված հողամասերը պետք է (2,896,092,487 դրամ արժեքով) ներդրվեն Ընկերության կանոնադրական կապիտալում:</p> <p>Վերոհիշյալ երկու գործարքներն իրականացավել են:</p> <p>Որոշմամբ Ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 % կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեղեկացմամբ՝ Հայաստանի Հանրապետության՝ «Մասդար Արմենիա 1» ՓԲԸ-ում ունեցած 15% բաժնեմասի կառավարումը պահանջում է Հայաստանում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև «ԱՅԳ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մասին ՀՀ կառավարության, «Մասդար Հայաստան 1»-ի և «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ-ի միջև կնքված</p>		
--	--	--	--	--	--

			<p>կառավարության աջակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 3-րդ տարբերակի ստորագրում, քանի որ ՀՀ կառավարության 25.07.2024 թվականի N 1167-Ն որոշմամբ Համաձայնագրում կատարված որոշ փոփոխություններն արտացոլող տարբերակը, այլևս ակտուալ չէ՝ դրանում նշված ժամկետների հետաձգման պատճառով:</p> <p>Ներկայում տարվում են աշխատանքներ Համաձայնագրի 3-րդ տարբերակի համաձայնեցման և ստորագրման ուղղությամբ, որով փոփոխություն կկատարվի նաև «Շինարարության Մեկնարկի Ամսաթվում»:</p>		
		<p>32.3.2 Ներդրումային ծրագրերի մշակում /ժամկետ՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/</p>	<p>Հողմային էներգիայի ներուժի գնահատման և հողմակայաններ կառուցելու նպատակով Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) տեխնիկական աջակցությամբ շարունակվում է «Առաջարկվող գիտելիք և տեխնիկական աջակցություն Հայաստանին՝ գնահատելու հողմային էներգիայի ծրագրերի կենսունակությունը» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ, հաշվարկներ և վերլուծություններ:</p>		
		<p>32.3.3 Արդյունքների ամփոփում և վերջնականացում</p> <p>/ 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/</p>	<p>Հողմային էներգիայի ներուժի գնահատման և հողմակայաններ կառուցելու նպատակով Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) տեխնիկական աջակցությամբ շարունակվում է «Առաջարկվող գիտելիք և տեխնիկական աջակցություն Հայաստանին՝ գնահատելու հողմային էներգիայի ծրագրերի կենսունակությունը» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ, հաշվարկներ և վերլուծություններ:</p>		

			<p>Ծրագրի շրջանակներում նախատեսված հեռանկարային տարածքներից ընտրվել է Քարախաչը, որտեղ էլ սկսվել է իրականացվել քամու պոտենցիալի չափումներ:</p> <p>Ծրագրի շրջանակներում իրականացվել են նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ և հաշվարկներ, վերլուծություններ, ընտրվել է տեղանքը, կառուցվել է 2 աշտարակ, տեղադրվել 1 լիդար, տեղադրվել են չափիչ սարքավորումներ: Ներկայումս երեք կետով իրականացվում է քամու մշտադիտարկում:</p> <p>Չափումների արդյունքների ամփոփումը նախատեսվում է ավարտել 2026 թվականին, որի արդյունքներով 150 ՄՎտ հզորությամբ հողմային կայանի կառուցման նպատակով կարող է դիտարկվել ներդրումային փաթեթի կազմման հնարավորությունը:</p>		
36	Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացում	36.1 Բնակարանների և անհատական տների էներգաարդյունավետ վերանորոգման համար պետական աջակցության ցուցաբերում /2025 թվականի հուլիսի 1/	2025թ. հուլիսին ավարտվել է 2022թ.-ից մեկնարկած բնակելի տների և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման պետական աջակցության ծրագիրը: Ծրագրի մեկնարկից մինչև ավարտը շահառուների ընդհանուր թիվը		

			<p>կազմել 34 555, տրամադրված վարկերի հանրագումարը՝ շուրջ 83 մլրդ ՀՀ դրամ, պետական բյուջեից տրված սուբսիդավորման գումարը՝ շուրջ 6,237 մլրդ ՀՀ դրամ: Ըստ Երևան քաղաքի և մարզերի շահառուների թիվը կազմել է՝</p> <p>Երևան՝ 4287 Արագածոտն՝ 2661 Արարատ՝ 5556 Արմավիր՝ 4966 Գեղարքունիքի՝ 3145 Կոտայք՝ 5539 Շիրակ՝ 2690 Սյունիք՝ 1882 Վայոց ձոր՝ 939 Տավուշ՝ 1290 Լոռի՝ 1600</p>		
37	Կանոնավոր ուղևորափոխադրումների կանոնակարգում	37.1 Միասնական երթուղային ցանցի ներդրում /2024 թվականի դեկտեմբեր/	<p>Կատարման ընթացքում է:</p> <p>Հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում ամբողջովին ներդրվել և գործարկվել են Կոտայքի մարզի, Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի և Արագածոտնի մարզի միասնական երթուղային ցանցերը: Միասնական երթուղային ցանցի վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման</p>		

			<p>գործընթացի վերահսկողության ծրագրային համակարգում: Միասնական երթուղային ցանցի ներդրման գործընթացը դյուրացնելու և առկա կարգավորումները առավել հստակեցնելու նպատակով իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում 12 .07.2023թ. ընդունվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ—250-Ն օրենքը և հարակից օրենքները և դրանց կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը; Դատական կարգով վիճարկվում է Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթի արդյունքները: Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունը հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման պարտավորությունները չկատարելու պատճառով 2023 թվականին զրկվել էր սպասարկման իրավունքից: ՀՀ</p>	
--	--	--	--	--

			<p>վարչական դատարանի 2025 թվականի փետրվարի 13-ի N ՎԴ/4358/05/23 վարչական գործով կայացված դատական վճռի համաձայն՝ ընկերության հետ ստորագրվել էր հայտ-պարտավորությամբ նախատեսված տրանսպորտային միջոցները մրցությանին հանձնաժողովի գնահատմանը ներկայացնելու նոր պայմանագիր: Սակայն կազմակերպության կողմից հայտ-պարտավորությամբ նախատեսված պարտավորությունները կրկին չկատարելու պատճառով 2025 թվականին զրկվել է Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարակելու իրավունքից: Հայտարարվել է նոր մրցույթ, որը կկայանա 2026 թվականի հունվարի 29-ին: Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերի միասնական օպերատորի ընտրության համար հայտարարված մրցույթները չեն կայացել հայտերի բացակայության պատճառով: 2024-2025 թվականներին հայտարարված Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթները չեն կայացել: Հայտարարվել է նոր մրցույթ, որը</p>		
--	--	--	--	--	--

			<p>տեղի կունենա 2026 թվականի հունվարի 27-ին:</p> <p>2024 թվականին կայացած Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցերը սպասարկող կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Գ-Արքունիք-1» ՍՊԸ-ն ՏԿԵՆ 21.03.2025թ. N 507-Ա հրամանով զրկվել է սպասարկման իրավունքից, քանի որ ընկերությունը հայտ-պարտավորությամբ նախատեսված տրանսպորտային միջոցները սահմանված ժակետում չի ներկայացրել հանձնաժողովի գնահատմանը: Դրա պատճառով 2025 թվականի նոյեմբերի 24-ին հայտարարվել է նոր մրցույթ, որի արդյունքում Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի և Սևանի ու Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների սպասարկման մրցույթի հաղթող ճանաչված կազմակերպությունները 2026 թվականին երթուղիները կսպասարկեն հայտ-պարտավորությամբ նախատեսված տրանսպորտային միջոցները մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնելուց և համապատասխան փաստաթղթավորումից հետո:</p>		
		<p>37.2 Երթուղիների քարտեզավորում,</p>	<p>Միասնական երթուղային ցանցի ներդրման շրջանակներում</p>		

		<p>Էլեկտրոնային տոմսավորման համակարգի և էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ներդրում /2024 թվականի դեկտեմբեր/</p>	<p>ստեղծվել է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման գործընթացի վերահսկողության ծրագրային համակարգը, որի վերջնական գործարկումից հետո դրա միջոցով կներդրվեն էլեկտրոնային տոմսավորման համակարգը և էլեկտրոնային երթակարգավարական ծառայությունը:</p> <p>Ծրագրային համակարգի գործարկումը հնարավոր կլինի բոլոր մարզերի միասնական երթուղային ցանցերը ներդնելուց հետո:</p> <p>Ծրագրային համակարգում մուտքագրվել են Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցի բոլոր տվյալները, իսկ երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների տեղորոշման համակարգերը միացվել են ծրագրային համակարգին:</p>		
38	<p>ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրում</p>	<p>38.1 ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրում /2024 թվականի դեկտեմբեր/</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով մշակվել է համակարգի տեխնիկական առաջադրանքը և հայտարարվել է միջազգային երկփուլ մրցույթ: 2023թ. օգոստոսին իրականացվել է հայտերի գնահատումը, որի արդյունքում գնահատման փուլը հաղթահարած երեք մասնակցի</p>		

			<p>ուղարկվել է երկրորդ փուլի հրավերը՝ գնային առաջարկի և այլ պայմանների վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու նպատակով:</p> <p>ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրման հարցը քննարկվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի նիստում, որի արդյունքում համակարգի ներդրման գործընթացի ժամկետը հետաձգվել է՝ հաշվի առնելով համակարգի ներդրման տեխնիկական և ծրագրային ապահովման հետ կապված հարցերը:</p> <p>2025 թվականին վթարային իրավիճակներում արտակարգ օպերատիվ ծառայությունների կանչի ավտոմատացված համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը կրկին ներկայացվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի քննարկմանը:</p>		
		<p>38.2 Ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրում /2024 թվականի դեկտեմբեր/</p>	<p>Ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման շրջանակներում մշակվել է «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որը քննարկվել է Տարածքային</p>		

			<p>զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2023 թվականի մարտի 6-ի նիստում:</p> <p>Օրենսդրական փաթեթի ընդունումից հետո հնարավոր կլինի ապահովել ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման իրավական դաշտը:</p> <p>2024 թվականի սեպտեմբերի 4-ին կայացած ճանապարհների օժանդակ ենթակառուցվածքների վերաբերյալ նիստի ընթացքում քննարկված բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրման և բեռնատար տրանսպորտային միջոցներով ճանապարհներին հասցվող վնասի գնահատման հետ կապված հարցերի շրջանակներում քննարկվել է նաև ճանապարհային վճարի գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացը, որի ապահովման նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը դիմել է Հաղորդակցության արևելյան գործընկերության ներդրումային հիմնադրամին (EPIC) Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային վճարի գանձման և կշռման համակարգի ներդրման համար ուսումնասիրություն</p>		
--	--	--	---	--	--

			<p>իրականացնելու համար: Հիմնադրամի կողմից համակարգի ներդրման ուսումնասիրություններն ընթացքի մեջ են:</p>		
		<p>38.3 Բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրում /2024 թվականի դեկտեմբեր/</p>	<p>Իրականացվում են աշխատանքներ ճանապարհների վրա ծանրաքաշ մեքենաների կշռման նպատակով հնարավորինս լայն սփռված կշեռքների ցանց ստեղծելու համար:</p> <p>Ներկայումս արդեն իսկ ձեռք բերված 2 անշարժ էլեկտրոնային կշեռքներից մեկը տեղադրված է «Սյունիքի մարզի, Շաքիի վարչական տարածքում, ընդհանուր օգտագործման Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի 200-րդ կմ-ի վրա, իսկ երկրորդը տեղադրված է « Արմավիրի մարզի Զվարթնոցի հարակից տարածքում: 2 անշարժ և 1 շարժական կշեռքների միջոցով «Վոխվարչապետ Տ.</p> <p>Իսախանյանի մոտ 2024 թվականի սեպտեմբերի 4-ին կայացած ճանապարհների օժանդակ ենթակառուցվածքների վերաբերյալ Նիստի ընթացքում քննարկվել են բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման համակարգի ներդրման և բեռնատար տրանսպորտային միջոցներով ճանապարհներին հասցվող վնասի գնահատման հետ կապված հարցերը: Նիստի N ՓՎ/116-2024 արձանագրության 4-րդ կետի 1.3- րդ ենթակետով հանձնարարվել է</p>		

			<p>« Երկրագործական կառավարման և ենթակառուցվածքների և « Երկրի ներքին գործերի նախարարություններին համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկներ ճանապարհային վճարի կառավարման համակարգի բարեփոխումների վերաբերյալ: Հանձնարարականի կատարման նպատակով Երկրի ներքին գործերի նախարարության հետ քննարկվել է վերջինիս կողմից ներդրվող էլեկտրոնային համակարգին ճանապարհային վճարի գանձման համակարգի կոնսոլիդացման հարցը:</p> <p>Միջոցառման կատարումը ավարտին կհասցվի 38.2-րդ կետի միջոցառման հետ համատեղ, քանի որ նախատեսվում է միավորել բեռնատար տրանսպորտային միջոցների ընթացքի ժամանակ կշռման և ճանապարհային վճարի գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացները:</p>		
40	Շահագործվող տրանսպորտային միջոցների թարմացում	40.1 Օգտահանման օրենսդրության մշակում /2024- 2025թթ./	<p>Մշակվել է ««Թափոնների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը շահագրգիռ մարմինների հետ քննարկման արդյունքում լրամշակվելուց հետո 25.12.2024թ. N ԴԽ/25.2/41886-2024 գրությամբ ներկայացվել է « Կարգապետի աշխատակազմ:</p>		

			<p>Վարչապետի 2023 թվականի հունվարի 31-ի N 0211 հանձնարարականի պահանջների ապահովման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի 27.12.2024թ. N 02/12.93/44928-2024 գրությամբ օրենսդրական փաթեթն ուղարկվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, սակայն ՀՀ Ազգային ժողովում օրենսդրական փաթեթի քննարկումը դեռևս չի կայացել:</p>		
41	<p>Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի և երկարակետության շարունակական բարձրացում</p>	<p>41.1 Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգում (հիմնանորոգում, միջին նորոգում), վերակառուցում և կառուցում /2021-2026թթ./</p>	<p>2025 թվականի ընթացքում իրականացվել է 504,5 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգում, կառուցում, վերակառուցում, միջին նորոգում:</p>		
42	<p>Թունելների և կամուրջների վերականգնում և կառուցում</p>	<p>42.1 Թունելների և կամուրջների հիմնանորոգում, նորոգում, վերակառուցում, մասնավորապես՝ Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնում /2021-2026թթ./</p>	<p>Պուշկինի թունելի նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են: Որոշվել է Դիլիջանի գոյություն ունեցող թունելի վերականգնման փոխարեն կառուցել նոր թունել, ինչը, բացի շինարարական նախագծից, ենթադրում է նաև բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատում, հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի</p>		

			<p>պատրաստում: Նախագծային աշխատանքներն ավարտված են: Նախագծի և բնապահպանական ու սոցիալական փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացումը նախատեսված է 2026 թվականի ապրիլին:</p>		
43	<p>Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում</p>	<p>43.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) վերազինում /2022-2026թթ./</p>	<p>Կրում է շարունակական բնույթ:</p>		
44	<p>Ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացում՝ «սև կետերի» բարելավում</p>	<p>44.1 ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների «սև կետերի» գույքագրում և դրանց վերացման նպատակով ճանապարհատրանսպորտ</p>	<p>2025թ. նախատեսվել է թվով 10 «սև կետերի» վերացման և ճանապարհային անվտանգության բարելավման միջոցառումների նախագծային փաստաթղթերի պատրաստում: Միաժամանակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների</p>		

		<p>այի ն պատահարների տվյալների վերլուծության հիման վրա անվտանգության միջոցառումների շարունակական իրականացում /2022-2026թթ./</p>	<p>Նախարարության և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ մարզերում արձանագրվել են բազմաթիվ վթարավտանգ հատվածներ («սև կետեր»): Նախարարությունը նախաձեռնել է միջազգային զարգացման գործընկեր կազմակերպությունների ներգրավմամբ ճանապարհային անվտանգության բարելավման ծրագրերի իրականացման գործընթաց: Այդ նպատակով նաև ներկայացվել է տեխնիկական աջակցության հայտ՝ «Տրանսպորտի ոլորտում ներդրումների համար արևելյան գործընկերության» (EPIC) ծրագրի գործիքակազմից օգտվելու համար, որով նախատեսվում է իրականացնել շուրջ 40 «սև կետերի» վերացմանն ուղղված ծրագիր: Նշված կետերի մեծ մասը գտնվում են միջպետական նշանակության՝ Տրանսեվրոպական ճանապարհային ցանցի (TEN-T) մաս կազմող ճանապարհների վրա: Ծրագրի շրջանակներում ԵՄ փորձագետների ներգրավմամբ կիրականացվի ճանապարհային անվտանգության խնդիրների համակողմանի վերլուծություն, դրանց բարելավմանն ուղղված լուծումների, ինչպես նաև «սև</p>		
--	--	---	---	--	--

			կետերի» հայտնաբերման և վերացման միջոցառումների ծրագրի մշակում:		
46	«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի իրականացման շարունակություն	46.5 Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 42 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացում /2023-2024թթ./	Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 42 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքներն ավարտվել են: Ճանապարհահատվածը բաց է երկկողմանի երթևեկության համար		
		46.7. Տրանշ 5՝ Գյումրի շրջանցիկ ճանապարհահատվածի նախագծանախահաշվային փաթեթի վերանայում	Աշխատանքներ են տարվում Տրանսպորտի ոլորտում ներդրումների համար Արևելյան գործընկերության EPIC ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2026 թվականին:		
51	Ճանապարհային անվտանգության համակարգի ներդրում	51.2 Ճանապարհային աուդիտի համակարգի ձևավորում (ճանապարհային աուդիտի անցկացման պահանջների ձևավորում, ընթացակարգերի սահմանում, աուդիտորների որակավորում) /2024-2026թթ./	ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի հունիսի 12-ին ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հուլիսի 4-ի ՀՕ 299-Ն օրենքի 19.2 հոդվածով նախատեսվում է ՀՀ-ում ներդնել ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման՝ այդ թվում նաև ճանապարհային անվտանգության աուդիտի համակարգ: Նշվածի շրջանակներում 2025 թվականի ընթացքում մշակվել է և օրենքով սահմանված ՀՀ վարչապետի աշխատակազմին է ներկայացվել «Ճանապարհային		

			<p>անվտանգության աուդիտի իրականացման կարգը, ճանապարհային անվտանգության աուդիտորի իրավունքները և պարտականությունները ու լրացուցիչ ճանապարհային անվտանգության աուդիտի նշանակման դեպքերը, ճանապարհային անվտանգության աուդիտորի որակավորման պահանջները, որակավորման վկայականի տրամադրման կամ մերժման հիմքերը, ժամկետները և վերապատրաստման իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Միաժամանակ, Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ Ճանապարհային անվտանգության գլոբալ հաստատության (GRSF) հետ իրականացվող «Հայաստանի ճանապարհային անվտանգության կառավարման ուսումնասիրում» ծրագրի շրջանակներում Ծրագրի փորձագետի դիտարկումների հիման վրա նախագիծը լրամշակվել է և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>		
53	Ճանապարհների պետական գրանցում	53.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրում և պետական գրանցում	Կառավարության գործունեության ծրագրով նախատեսված է միջոցառումն իրականացնել ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Նշվածի շրջանակներում 2025 թվականի պետական բյուջեով, որպես նոր		

		<p>/2022-2026թթ./</p>	<p>նախաձեռնություն և նոր միջոցառում, ներառելու առաջարկությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվել է, և 2025 թվականի ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել, ինչի պատճառով միջոցառումը չի իրականացվել: Միաժամանակ, 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտով ճանապարհների պետական գրանցման միջոցառումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կրկին մերժվել է: Նշվածով պայմանավորված՝ ՏԿԵ նախարարությունն առաջարկել է միջոցառումը հանել Կառավարության գործունեություն միջոցառումների ծրագրից: Սակայն Կադաստրի կոմիտեն ներկայացրել է առարկություններ, ինչի հետևանքով միջոցառումը թողնվել է անփոփոխ: Կադաստրի կոմիտեն առաջարկել է դիտարկել «Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների գրանցում» միջոցառման իրականացումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 47.1-ին հոդվածի 5-12-րդ մասերով սահմանված կարգով նախատեսելու նպատակահարմարության հարցը: Սակայն դա ընդունելի չէ ՏԿԵ նախարարության կողմից:</p>		
--	--	-----------------------	---	--	--

			<p>Նշենք, որ Կադաստրի կոմիտեի կողմից դեռևս 2023 թվականից << Շիրակի մարզում իրականացվում է օրթոլուսանկարների երկրաչափական համապատասխանեցում և ճանապարհների սահմանների հետ համադրում՝ ճանապարհների փորձնական քարտեզագրում: Սակայն օրթոլուսանկարների միջոցով հնարավոր չէ ճշգրտորեն իրականացնել ճանապարհների չափագրումը՝ առանց հաշվի առնելու ռելիեֆը, այսինքն՝ ճանապարհների չափագրումը նման եղանակով իրականացնելու դեպքում առկա է անճշտությունների թույլատրման հավանականության, ինչպես նաև՝ պետական սեփականության փոշիացման ռիսկ: Ուստի << միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրումը անհրաժեշտություն է:</p> <p>Միաժամանակ, նշենք, որ ՏԿԵ նախարարությունը 2026-2028թթ. ՄԺԾԾ և 2026թ. պետական բյուջեի հայտով կրկին անգամ ճանապարհների պետական գրանցման միջոցառումը, որպես նոր նախաձեռնություն, ներգրավելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացվել << ֆինանսների նախարարություն: Վերջինս</p>		
--	--	--	--	--	--

			<p>կրկին մերժել է հայտը, ինչի պատճառով միջոցառումը 2026թ. պետական բյուջեի հայտում չի ներառվել:</p>		
55	<p>Ճանապարհային ենթակառուցվածքների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում և մեղմացնող գործողությունների իրականացում</p>	<p>55.1 ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում և ընթացիկ աշխատանքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակում և իրականացում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան /2024-2026թթ./</p>	<p>Ի կատարում ՀՀ Կառավարության 13 մայիսի 2021 թվականի N 749-Լ որոշման Ծրագրի Կատարումն Ապահովող Միջոցառումների Ցանկի (2021-2025թթ.) թիվ 1.8. «Տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում կլիմայական ռիսկի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու որոշման, ՀՀ ՏԿԵՆ նախաձեռնությամբ և Ասիական Ջարգացման Բանկի աջակցությամբ 2024թ. հուլիսից մեկնարկել է Տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտի կլիմայական, ջրաբանական և երկրաբանական վտանգների խոցելիության ուսումնասիրության և ոլորտային հարմարվողականության ծրագրի մշակման գործընթացը: 2025թ. Դեկտեմբերին ավարտվել է ոլորտային կլիմայի հարմարվողականության ծրագրի մշակման գործընթացը, որը կներկայացվի 2026 թվականին: Ուսումնասիրության նպատակով ներգրավվել են երեք մասնագիտացված</p>		

			<p>ընկերություններ, որոնց հետ համատեղ աշխատանքի արդյունքում.</p> <p>-ուսումնասիրվել են տրանսպորտային ենթակառուցվածքներին, ներառյալ ճանապարհային ցանցին, կամուրջներին, թունելներին, երկաթուղային ցանցին, օդային տրանսպորտի օբյեկտներին և քաղաքային հանրային տրանսպորտային ցանցերին սպառնացող կլիմայական վտանգները,</p> <p>առավել խորությամբ ուսումնասիրվել և աշխարհագրական տեղակայմամբ գույքագրվել են միջպետական և հանրապետական ճանապարհային ցանցին սպառնացող կլիմայական, ջրաբանական և երկրաբանական վտանգները,</p> <p>երկրաբանական վտանգների տեսակետից ուսումնասիրվել են ճանապարհներին սպառնացող քարաթափումները, սողանքները, սելավային հոսքերը, սեյսմիկ ռիսկերը,</p> <p>-կլիմայական և ջրաբանական ռիսկերի տեսակետից գնահատվել են անսովոր կլիմայական երևույթների, ներառյալ՝</p>		
--	--	--	--	--	--

			<p>ջրհեղեղների ազդեցությունը ճանապարհային ենթակառուցվածքների վրա, կատարվել է Դեբեդի ավազանի մանրամասն ջրաբանական մոդելավորում, այլ խոշոր գետային ավազանների ջրաբանական ռիսկերի ուսումնասիրություն, ըստ ուսումնասիրությունների արդյունքների և ճանապարհային ենթակառուցվածքներին սպառնացող վտանգների՝ կատարվել է ճանապարհների առանձին հատվածների դասակարգում ըստ միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության, հաշվի առնելով ճանապարհների ինտենսիվությունը, այլընտրանքային ճանապարհների առկայությունը, ճանապարհի սոցիալ-տնտեսական նշանակությունը, -առավել խոցելի և կործանարար աստիճանի խոցելի խմբերի համար մշակվել են ռիսկերի մեղմման ուղղված ինժեներական լուծումներ, տրվալ է դրանց արժեքային գնահատական, կազմվել է ներդրումային պլան 69- 88 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, -Նախատեսվում է ներդրումային պլանը ներկայացնել ՀՀ</p>		
--	--	--	---	--	--

			<p>Կառավարություն՝ Հանրային ներդրումների կառավարման ընթացակարգին համապատասխան, տրանսպորտային ենթակառուցվածքների կլիմայական դիմադրողականության բարձացման ներդրումային ծրագրի հաստատման նպատակով:</p>		
56	<p>Ճանապարհային ոլորտի մասնագետների և կազմակերպությունների կարողությունների զարգացում</p>	<p>56.1 Յուրաքանչյուր տարի ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում և դասընթացների կազմակերպում /2022-2026թթ./</p>	<p>2025 թվականի ընթացքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել են հետևյալ դասընթացները, վերապատրաստումները և աշխատաժողովները. Փետրվարի 21-ին Նիդեռլանդների ֆինանսների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպել է աշխատաժողով բյուջետային ծրագրերի կատարողականների թեմայով, որին մասնակցել են հիմնադրամի համապատասխան մասնագետները: Մարտի 3-ին «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ-ն, «Ադետների դիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը և RED իտալական</p>		

			<p>ընկերությունը՝ Ասիական զարգացման բանկի պատվիրակմամբ և ՀՀ Ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ կազմակերպել են վավերացման աշխատաժողով՝ «Հայաստանի հանրային ենթակառուցվածքների սեյսմիկ անվտանգության բարելավման և կառավարման ֆինանսավորման ծրագրի մշակումը» նախագծի շրջանակներում:</p> <p>3. Մարտի 5-ին Ասիական զարգացման բանկը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացրել են «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների ներքո» ավտոմոբիլային տրանսպորտի համար օդի աղտոտող նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկների կարողությունների զարգացման աշխատաժողով: Սեմինարը ներկայացրել է նոր մեթոդոլոգիաներ՝ բարելավելու արտանետումների հաշվետվությունները և շրջակա միջավայրի գնահատումները՝ ամրապնդելով Հայաստանի կարողությունը՝ կատարելու կլիմայական իր պարտավորությունները:</p> <p>4. Մարտ ամսին հիմնադրամի փաստաթղթաշրջանառության բաժնի աշխատակիցները մասնակցել են Կառուցապատման</p>	
--	--	--	---	--

			<p>թույլտվությունների միասնական է-լեկտրոնային համակարգի գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով կազմակերպված «MulberryGroupware 2.0» համակարգի լրացուցիչ վերապատրաստմանը:</p> <p>5. Ապրիլի 3-ից ապրիլի 11-ն ընկած ժամանակահատվածում Կայուն և ներառական ճանապարհային հատվածի 2-րդ ծրագրի մեկնարկային առաքելության շրջանակում Ասիական զարգացման բանկում (ԱԶԲ) տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում: Հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Ն. Զուլայանը, հիմնադրամի այլ պատասխանատուներ ԱԶԲ ներկայացուցիչների հետ քննարկել են երկկողմ համագործակցության շրջանակները, ինչպես նաև՝ առաջիկա ծրագրերը: ՏԿԵ նախարարությունը և հիմնադրամը համատեղ առաքելություն են իրականացրել՝ խթանելու Հայաստանի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանը: Ուշադրության կենտրոնում է եղել Պուշկինի և Դիլիջանի թունելների արդիականացման հարցը՝ խելացի, ճկուն լուծումներով և մասնավոր հատվածի ներգրավվածության ուսումնասիրման հիման վրա՝ երկարաժամկետ ազդեցության նպատակով:</p>		
--	--	--	--	--	--

		<p>6. Մայիսի 19-21-ը Ղազախստանի Հանրապետությունում կայացել է Ասիական զարգացման բանկի «Կենտրոնական և Արևմտյան Ասիա, ծրագրի կատարողականի բարելավում գնահատման միջոցով» խորագրով աշխատաժողով, որի նպատակն է եղել ամրապնդել պորտֆելի որակը, նախագծերի պատրաստվածությունը և իրականացումը՝ գնահատումից քաղված դասերի միջոցով: Դեպքի մեթոդի կիրառմամբ մասնակիցները մեկնաբանել և կիրառել են գնահատման չափանիշները՝ ավարտված նախագծերի գնահատումները բարելավելու համար:</p> <p>7. Մայիսի 15-17-ը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկն իրականացրել է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Վաղ գործողությունների աջակցություն՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն է եղել արագացնել 2020 թվականից հետո «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» իրականացմանն ուղղված վաղ միջոցառումների</p>		
--	--	--	--	--

			<p>նախապատրաստումն ու ընդունումը՝ ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելով</p> <p>«Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներին՝ վերանայելու և համապատասխանեցնելու իրենց ազգային թիրախները, Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, քաղաքականության շրջանակները, մոնիթորինգի մեխանիզմները և ֆինանսավորումը:</p> <p>8. Հունիսի 10-ին Նիդեռլանդների ֆինանսների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպել է աշխատաժողով բյուջետային ծրագրերի կատարողականների թեմայով՝ սույն թվականի փետրվարի 21-ին կայացած աշխատաժողովի շարունակականությունն ապահովելու նպատակով, որին նույնպես մասնակցել են հիմնադրամի համապատասխան մասնագետները:</p> <p>9. Հունիսի 3-ին Ասիական զարգացման բանկը Հայաստանում իրականացրել է աշխատաժողով՝ ուղղված «Անվտանգ համակարգի» մոտեցման կիրառմանը «Ճկուն և ընդգրկուն ճանապարհային ոլորտի</p>		
--	--	--	---	--	--

			<p>բարելավման ծրագիր II»-ի շրջանակում:</p> <p>10. Հունիսի 11-13-ը Ասիական զարգացման բանկը Դիլիջանում անցկացրել է ծրագրերի կառավարման վերապատրաստման աշխատաժողով: Վերջինս ուղղված է եղել ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի պատրաստվածության, գնումների, պայմանագրերի կառավարման և անվտանգության միջոցառումների բարելավմանը:</p> <p>11. Հունիսի 20-ին Ասիական զարգացման բանկի փորձագետը անցկացրել է «Ճանապարհային ակտիվների կառավարման համար ճանապարհների պահպանման կատարողականի վրա հիմնված պայմանագրային մեթոդի կիրառումը» թեմայով աշխատաժողով, որի նպատակն է եղել քննարկել կատարողականի վրա հիմնված ճանապարհների պահպանման պայմանագրային մեթոդի կիրառման մարտահրավերները և առկա հայեցակարգերը:</p> <p>12. Հուլիսի 3-ին Արևելյան գործընկերության Ճանապարհային անվտանգության դիտակետի (EaP RSO – Eastern Partnership Road Safety Observatory) կողմից կազմակերպվել է «Ճանապարհային անվտանգության աուդիտի մեխանիզմներ գործնական</p>		
--	--	--	--	--	--

			<p>մասնագետների համար» թեմայով վերապատրաստման դասընթաց:</p> <p>Դասընթացի ընթացքում ներկայացվել են ճանապարհային անվտանգության ոլորտում ԵՄ փորձը և օրենսդրական պահանջները, աուդիտի իրականացման փուլերը, գործիքները և ազգային մակարդակում դրանց կիրառման հնարավոր մեխանիզմները:</p> <p>13. Օգոստոսի 18-ին Ասիական զարգացման բանկը և ՏԿԵ նախարարությունն անցկացրել են սեմինար՝ նվիրված տրանսպորտային ոլորտի կլիմայական և աղետների ռիսկերի վերլուծությանը: Քննարկվել են միջպետական ճանապարհների հիդրոլոգիական վտանգները և դրանց նվազեցման միջոցառումները: Ներկայացվել են ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր՝ տրանսպորտի ադապտացիոն պլան, բնական վտանգների համապետական գնահատում և Դեբեդ գետի հիդրոլոգիական մոդելավորում՝ օգնելու Մ6 ճանապարհի գրագետ վերականգնմանը:</p> <p>14. Սեպտեմբերի 5-18-ն ընկած ժամանակահատվածում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից կազմակերպվել է մարդկային ռեսուրսների զարգացման</p>		
--	--	--	--	--	--

			<p>ոլորտում երկկողմ համագործակցության նախագծերի իրականացման նպատակով հատկացվող աջակցության շրջանակներում ՉԺՀ առևտրի նախարարության Միջազգային բիզնես պաշտոնյաների ակադեմիայի նախաձեռնությամբ Պեկին քաղաքում հայկական կողմի առաջարկությամբ անցկացվող «Փոխկապակցվածություն, միջազգային տրանսպորտ և լոգիստիկա» խորագրով դասընթաց:</p> <p>15. Հոկտեմբերի 2-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից կազմակերպվել է «ՃՇՀԱՀ գիտահետազոտական կենտրոնի հնարավորությունները երթևեկության անվտանգության ուլորտի հետազոտություններում» թեմայով սեմինար:</p> <p>16. Հոկտեմբերի 13-ին Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող և Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Վաղ գործողությունների աջակցություն՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագրի</p>		
--	--	--	---	--	--

			<p> շրջանակներում կազմակերպվել է ծրագրի ավարտական աշխատաժողովը: Ծրագրի նպատակն է եղել արագացնել 2020 թվականից հետո «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» իրականացմանն ուղղված վաղ միջոցառումների նախապատրաստումն ու ընդունումը՝ տրամադրելով ֆինանսական և տեխնիկական աջակցություն «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներին՝ իրենց ազգային թիրախների, Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի, քաղաքականության շրջանակների, մոնիթորինգի մեխանիզմների և ֆինանսավորման համակարգերի վերանայման և համապատասխանեցման նպատակով՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակին»: Ավարտական աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները, ինչպես նաև մշակված ռազմավարության ներքո սահմանված ազգային նպատակներն ու թիրախները: Աշխատաժողովի ընթացքում կազմակերպվել են նաև պանելային քննարկումներ՝ նվիրված </p>		
--	--	--	---	--	--

			<p>կենսաբազմազանության նազմավարական պլանավորմանը և Հայաստանում COP17-ի նախապատրաստական գործընթացներին, ինչպես նաև ոլորտային առաջնահերթություններին և համագործակցային մեխանիզմներին՝ կենսաբազմազանության պահպանության արդյունավետության ապահովման տեսանկյունից:</p> <p>17. Հոկտեմբերի 11-ից 24-ը Չինաստանի Ֆուժու քաղաքում հիմնադրամի ներկայացուցիչները մասնակցել են թունելների ճարտարագիտության և տեխնոլոգիաների թեմայով սեմինարին: Այն նախատեսված է եղել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության (BRI) երկրների համար: Հիմնադրամի ներկայացուցիչները ծանոթացել են թունելների կառուցման, շահագործման և կառավարման միջազգային փորձին, նորագույն տեխնոլոգիաներին:</p> <p>18. Հոկտեմբեր ամսին ՀՀ ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում կազմակերպվել է ունկնդիրների պատրաստման ամենամյա դասընթաց՝ համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ</p>		
--	--	--	--	--	--

			<p>օրենքների պահանջների և ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-Ն որոշման:</p> <p>19. Նոյեմբերի 5-ին Գլխավոր Էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Համապարփակ աջակցության ծրագիր՝ Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի՝ Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և 7-րդ ազգային զեկույցի մշակման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կազմակերպվել է աշխատաժողով: Ծրագրի նպատակն է եղել ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրել ՄԱԿ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներին՝ իրենց ազգային թիրախների, կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և Կունմին-Մոնրեալի Կենսաբազմազանության գլխավոր շրջանակին համապատասխանեցման, ինչպես նաև 7-րդ ազգային զեկույցի մշակման և ներկայացման համար:</p> <p>20. Նոյեմբերի 12-ից 14-ը Ֆրանսիական Ջարգացման Գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող</p>		
--	--	--	--	--	--

			<p>Տեխնիկական աջակցության շրջանակներում կազմակերպվել է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի մշակման և գնահատման ոլորտներում կարողությունների զարգացմանն ուղղված եռօրյա ուսումնական սեմինար: Այս վերապատրաստման դասընթացի նպատակն է եղել ամրապնդել աշխատակիցների կարողությունները՝ հիմնավոր ներդրումային հնարավորություններ բացահայտելու և բարձրորակ հանրային ներդրումային ծրագրեր պատրաստելու համար, ամրապնդել կարողությունը՝ արդյունավետորեն վերահսկելու ճանապարհային նախագծերի իրագործելիության ուսումնասիրությունները, ամրապնդել աշխատակիցների կարողությունները՝ ճանապարհային նախագծերի համար բարձրորակ կլիմայական վերլուծության անցկացման համար՝ համաձայն ներդրումային գնահատման ստանդարտների: 21. Նոյեմբերի 17-21-ը Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) աջակցությամբ տեղի է ունեցել Գետային ճարտարագիտություն «River Engineering Training» հնգօրյա մասնագիտական դասընթացը: Հնգօրյա սեմինարի ավարտին</p>		
--	--	--	---	--	--

			<p>մասնակիցները ստացել են հիմնական պատկերացում այն մասին, թե ինչպես բացահայտել և քարտեզագրել լեռնային ջրային ավազանում հանդիպող հավանական հիդրոլոգիական վտանգների սցենարները՝ անհրաժեշտության դեպքում դրանց վերագրելով մոտավոր կրկնության պարբերականություններ:</p> <p>Քննարկվել են հետևյալ վտանգները կամ երևույթները՝ ջրհեղեղներ, նստվածքների շարժ, տեղափոխում և կուտակումներ, ներառյալ տեղային մաշվածությունը, ինչպես նաև՝ գետափի էրոզիան: Դասընթացի ընթացքում ներկայացվել են նաև նստվածքների տեղափոխման դինամիկան, ինչպես նաև տեղային մաշվածության երևույթները:</p> <p>22. Նոյեմբերի 26–27-ին Ասիական զարգացման բանկը Երևանում իրականացրել է երկօրյա աշխատաժողով՝ ԱԶԲ ծրագրերում գենդերային ինտեգրումը ուժեղացնելու և Հայաստանի Գենդերային գնահատման նախնական տարբերակը հաստատելու նպատակով:</p> <p>23. Նոյեմբերի 25-26-ը Սեուլ քաղաքում կայացել է Բազմակողմանի զարգացման բանկի նախագծերի հրապարակ միջոցառումը, որը կազմակերպվել է Կորեայի առևտրի և ներդրումների խթանման</p>	
--	--	--	---	--

			<p>գործակալության կողմից: Միջոցառմանը մասնակցել են Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև՝ հիմնադրամի ներկայացուցիչը: Միջոցառման մասնակցությունը հիանալի հնարավորություն է տվել Հյուսիս-Հարավ ճանապարհայի միջանցքի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ներկայացմանը, ծրագիրը ֆինանսավորող դոնոր բանկերի հետ աշխատանքային քննարկման և Կորեական կազմակերպությունների հետաքրքրվածության բարձրացմանը, ինչպես նաև՝ թունելների շինարարության ոլորտում կորեական փորձի ծանոթացմանը: 24. Նոյեմբերի 20-ին Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի աջակցությամբ անցկացվել է «Տրանսպորտային անվտանգությունը կլիմայական մարտահրավերների պայմաններում. բեռնափոխադրումների անընդհատությունն ապահովելու և ջրհեղեղների հետևանքների վերացման համալիր</p>		
--	--	--	--	--	--

			<p>ռազմավարություններ» թեմայով համաժողով:</p> <p>25. Հոկտեմբերի 5-ից նոյեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) նախաձեռնությամբ Ճապոնիայում կազմակերպվել է «Ավտոմոբիլային ճանապարհների կառավարում և պահպանություն» խորագրով դասընթաց:</p> <p>26. 2024 թվականի մայիսի 25-26-ը Լոռու և Տավուշի մարզերի մի շարք համայնքներում տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված՝ հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակում Հայաստանին աջակցելու և աղետի հետևանքները նվազեցնելու նպատակով Շվեյցարիայի Համադաշնությունն՝ ի դեմս Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալության և Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության դեսպանության, «Վաղ վերականգնում ջրհեղեղներից հետո 2024» ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 15-19-ը Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) աջակցությամբ տեղի է ունեցել Կամուրջների</p>		
--	--	--	---	--	--

			<p>նախագծում «Bridge design» հնգօրյա մասնագիտական դասընթաց:</p> <p>Ամփոփելով վերոշարադրյալը՝ 2025 թվականին ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման նպատակով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աջխատակիցների շուրջ 70%-ը մասնակցել է վերապատրաստումների և դասընթացների:</p>		
		<p>56.2 Ճանապարհային ոլորտում ընդգրկված առանցքային սուբյեկտների (պատվիրատուներ, նախագծողներ, կապալառուներ, տեխնիկական հսկողություն իրականացնողներ և այլն) կարողությունների գնահատման և դրանց բարձրացման մեխանիզմների սահմանում /2022-2026թթ./</p>	<p>Նոյեմբերի 20-ին Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամը (ԿՁԵՀ) ՏԿԵՆ հետ համատեղ կազմակերպել է «Տրանսպորտային անվտանգությունը կլիմայական մարտահրավերների պայմաններում. բեռնափոխադրումների անընդհատությունն ապահովելու և ջրհեղեղների հետևանքների վերացման համալիր ռազմավարություններ» թեմայով համաժողով, որին մասնակցել են նաև ճանապարհային ոլորտի նախագծային, տեխնիկական հսկողության և շինարարական կազմակերպությունների մասնագետները: Համաժողովի նպատակն էր մասնակիցներին ներկայացնել Մոսկվայի ավտոմոբիլային և ճանապարհաշինարարական պետական տեխնիկական համալսարանի կողմից կատարված</p>		

			<p>ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսին տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքով վնասված ութ կամուրջների վիճակի հետազոտության արդյունքները՝ վեր հանել կամուրջների նախագծման, շինարարության, մոնիթորինգի հիմնախոնդիրները և դրանց լուծումներ:</p> <p>Միաժամանակ, 2025թ. դեկտեմբերի 15-19-ը Շվեյցարիայի համադաշնության կառավարության աջակցությամբ իրականացվել է «Կամուրջների նախագծում» թեմայով համաժողով, որին մասնակցել են նաև ճանապարհային ոլորտի նախագծային, տեխնիկական հստակության և շինարարական կազմակերպությունների մասնագետները:</p>		
59	<p>Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում</p>	<p>59.1 Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման նպատակով Հայաստանի</p>	<p>2025 թվականի ընթացքում իրականացվել են ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում բնակավայրերից դուրս գտնվող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող հատվածներում կառուցված շենք-շինությունների գույքագրման աշխատանքներ, որոնց արդյունքում արձանագրվել է հետևյալը.</p> <p>1. ՀՀ Շիրակի մարզով անցնող Մ-1, Մ-7, Հ-21, Հ-75 և Հ-32 ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում գույքագրված 37 օբյեկտներից</p>		

		<p>Հանրապետության պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ /2023-2026թթ./</p>	<p>թվով 29-ը՝ չեն համապատասխանում Օրենսդրության պահանջներին. 2. ՀՀ Լոռու մարզով անցնող Մ-3, Մ-6, Մ-7, Մ-8, Հ-22, Հ-25 և Հ-31 ճանապարհներին հարող տարածքներում գտնվող 192 օբյեկտներից թվով 174-ը՝ չեն համապատասխանում Օրենսդրության պահանջներին: Նշվածի շրջանակներում գույքագրված օբյեկտների ցանկերը ուղարկվել են ՀՀ Շիրակի և Լոռու մարզպետների աշխատակազմերին համապատասխան առաջարկություններ ստանալու համար:</p>		
61	<p>Դեպի «ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր գրունտային ճանապարհի կառուցում</p>	<p>61.1 «Ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր տանող գրունտային ճանապարհների կառուցում /2023-2026թթ./</p>	<p>Սույն միջոցառման շրջանակներում նախատեսվում է կառուցել շուրջ 60 կմ գրունտային ճանապարհ, մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում ճանապարհների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ Նախագիծ) ձեռք են բերվել ՀՀ պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցներով, իսկ Արարատի և Սյունիքի մարզերի մասով՝ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: Արագածոտնի և Շիրակի մարզպետների աշխատակազմերի կողմից բազմիցս հայտարարված Նախագծի ձեռքբերման</p>		

			<p>մրցույթները մասնակից չլինելու հանգամանքով պայմանավորված՝ չեն կայացել: Իսկ Արմավիրի մարզում ճանապարհների կառուցման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Փարաքար համայնքում առկա դաշտավայրեր, արոտավայրեր և խոտհարքներ տանող գրունտային ճանապարհները վերանորոգվել են Փարաքար համայնքի ուժերով:</p> <p>Հաշվի առնելով, որ առկա Նախագծերով գրունտային ճանապարհների կառուցման միջոցառման իրականացման համար նախատեսված 60կմ արդեն իսկ ապահովված է, ուստի Արագածոտնի և Շիրակի մարզերում նախատեսված ճանապարհների կառուցումը հանվել է միջոցառումից:</p> <p>Միաժամանակ, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի, Արարատի և Սյունիքի մարզպետների աշխատակազմերին հանձնարարվել է քննարկել համապատասխան համայնքների ղեկավարների հետ միջոցառման շրջանակներում ճանապարհների կառուցումը (Արարատի և Սյունիքի մարզերի մասով՝ նաև Նախագծի ձեռքբերման) իրականացնել ՀՀ կառավարության կողմից ՀՀ համայնքներին տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների</p>		
--	--	--	--	--	--

			<p>զարգացման ծրագրերին համաֆինանսավորման սկզբունքով տրամադրվող սուբվենցիաների շրջանակներում՝ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին համապատասխան: Սակայն վերջիններիս կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ճանապարհների կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ առկա չեն: «Ալյան» մարզագետիններ տանող գրունտային ճանապարհների կառուցման աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ՏԿԵ նախարարը 2025 թվականի սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած աշխատանքային քննարկման ընթացքում անձամբ զեկուցել է Վարչապետին:</p> <p>Հանձնարարվել է ճանապարհների կառուցման աշխատանքները հնարավորության դեպքում ներառել առաջիկայում իրականացվելիք ծրագրերում: Միաժամանակ, սույն միջոցառման ժամկետը երկարաձգվել է, նախատեսվում է 2026 թվականից սկսած յուրաքանչյուր տարի կառուցել 20կմ գրունտային ճանապարհ: Փոփոխությունը պայմանավորված է ՀՀ վարչապետի հետ ՏԿԵՆ</p>		
--	--	--	--	--	--

			<p>նախարարի հանդիպման ընթացքում Վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարման նպատակով, ըստ որի՝ ճանապարհների կառուցումն իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ յուրաքանչյուր տարի 20կմ:</p>		
62.	<p>Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում</p>	<p>62.1 Ուղևորատար և բեռնատար շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում /2021- 2026թթ. Կոնցեսիոն պայմանագրի գործունեության ընթացքում/</p>	<p>2025թ-ի ընթացքում իրականացվել է 7 կմ երկաթուղային գծի նորոգում: Ընդհանուր առմամբ փոխարինվել են 11424 կոճեր, որից՝ 4466-ը փայտյա, իսկ 6958-ը՝ երկաթբետոնե:</p> <p>Փոխարինվել է 2,2 կմ օպտիկամանրաթելային մալուխ:</p> <p>Հիմնանորոգվել է 2 զծանց:</p> <p>Վերանորոգվել է 1 երկաթբետոնյա կամուրջ:</p> <p>Արդիականացվել են 17 քարշային ենթակայաններ:</p> <p>Փոխարինվել է 255 հենասյուն, հիմնանորոգվել է ուղևորների նստեցման 3 հարթակ:</p> <p>Վերանորոգվել է 4 միավոր շոգեքարշ՝ 17 միավոր գծային սարքավորումների փոխարինմամբ:</p> <p>2025թ-ի ընթացքում տեղափոխված բեռների ծավալը կազմել է 1852,5 հազ. տոննա, որը 2024թ. համեմատությամբ աճել է 28,5%-ով, իսկ բեռնաշրջանառությունը կազմել է 485,9 մլն. տ-կմ, որը 2024թ-ի համեմատությամբ աճել է 27,4%-ով:</p> <p>2025 թվականի ընթացքում կոնտեյներներով տեղափոխվել է</p>		

			<p>454,9 հազ. տոննա բեռ, որը 2024թ-ի համեմատությամբ աճել է 12,8%-ով:</p> <p>2025թ-ին տեղափոխվել է 511400 ուղևոր, որը 2024թ-ի համեմատությամբ նվազել է 9,3%-ով:</p>		
63.	<p>Երկաթուղային ուղևորափոխադրումներ ից առաջացած վնասների սուբսիդավորման վերանայում</p>	<p>63.2 Մշակված մեխանիզմի ընտրություն և Կոնցեսիոն պայմանագրում փոփոխությունների կատարում /2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/</p>	<p>ՏԿԵ նախարարության կողմից մշակվել էր «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման նոր մեխանիզմ, որով նախատեսվում էր վնասների մինչև 100% փոխհատուցում՝ ՏԿԵ նախարարության կողմից ներկայացված (KPI) ապահովմամբ: Առաջարկված արդյունավետության ցուցանիշների չկատարումը նախատեսում էր սուբսիդավորման չափի նվազեցում, իսկ որոշ չափի չկատարումը նաև հաշվետու տարվա համար սուբսիդիայի չտրամադրում: Մշակված մեխանիզմը ներկայացվել էր ռուսական կողմին, սակայն վերջիններս հրաժարվել են ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն մշակված մոդելից և առաջարկում էին վերացնել ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման համար կոնցեսիոն պայմանագրով նախատեսված սահմանափակումները:</p>		

			<p>Բարձրացված հարցը փոխվարչապետների կողմից քննարկվել էր 2024թ. դեկտեմբերի 19-20-ին ք.Մոսկվայում կայացած ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական 23-րդ նիստի շրջանակներում:</p> <p>Որոշվել էր շարունակել սուբսիդավորման նոր մեխանիզմի ընտրության երկկողմ ռազմատանքները:</p> <p>ՏԿԵ նախարարության կողմից մշակվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման նոր մեխանիզմ, որը շրջանառվել է շահագրգիռ գերատեսչություններում:</p> <p>Սուբսիդավորման նոր մեխանիզմը ներառվել էր 10.11.2025թ.-ի ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում՝ ստացել է բացասական դիրքորոշում, պայմանով՝ լրամշակել հիմնավորումը և ներկայացնել համաեմատական վերլուծություն մետրոյի և ավտոբուսների դեպքում 1 ուղևորի համար պետության կողմից տրամադրվող սուբսիդավորման չափի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին առաջարկվող սուբսիդավորման չափերի համադրելիության վերաբերյալ:</p>		
--	--	--	--	--	--

			<p>Փաթեթը լրամշակվել և 25.12.2025թ. թիվ ԴԽ/29.1/44639-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p> <p>Փաթեթը կրկին լրամշակվել և 26.01.2026թ. ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>		
64.	<p>Առևտրային ծովագնացության հնարավորությունների զարգացում</p>	<p>64.1 Առևտրային ծովագնացության մասին օրենքի նախագծին հավանություն տալու մասին կառավարության որոշման ընդունում /2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ/</p>	<p>Մշակվել և շրջանառվել էր «Առևտրային ծովագնացության» օրենսգրքի նախագծի փաթեթը, որը ներառվել էր ս.թ. սեպտեմբերի 16-ին կայացած Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի օրակարգի հարցերում: Նիստի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից արվել էին դիտարկումներ, որի հիման վրա փաթեթը ուղարկվել էր ՀՀ արդարադատության նախարարություն՝ Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով: 23.12.2024թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացվել է փորձագիտական եզրակացությունը: Արված դիտարկումների հիման վրա Փաթեթը լրամշակվել է և սահմանված կարգով 10.03.2025թ-ին ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p> <p>«Առևտրային ծովագնացության» օրենսգրքի նախագծի փաթեթը ներառվել էր Տարածքային</p>		

			<p>զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 24.03.2025թ. նիստում և տրվել է դրական դիրքորոշում՝ պայմանով, որ կվերանայվի «նավի հիփոթեք» ձևակերպումը և դրան վերաբերելի կարգավորումները, նախագծերի փաթեթը ևս մեկ անգամ կհամաձայնեցվի ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության հետ, կվերանայվի առևտրային ծովագնացության ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմինը:</p> <p>ԵՄ փորձագետները արձանագրել են, որ կան մի շարք հրահանգներ և կանոնակարգեր որոնք պետք է ներառվեն օրենսգրքում, որի համար անհրաժեշտ է ԵՄ փորձագետների կողմից մասնագիտական աջակցություն:</p> <p>ԵՄ փորձագիտական աջակցություն ստանալու նպատակով դիմել ենք ՀՀ փոխվարչապետի գրասենյակ, սակայն մինչ օրս փորձագիտական աջակցություն չենք ստացել:</p> <p>ՀՀ արդարադատության նախարարության կողմից արված դիտարկումները շտկելու նպատակով վերջիններիս հետ կազմակերպվել են համատեղ քննարկումներ և ՀՀ արդարադատության նախարարությունը խոստացել է</p>	
--	--	--	---	--

			<p>ուսունասիրել այլ երկրների փորձը և ներկայացնել համապատասխան փոփոխության առաջարկություն, որը մինչ օրս չի ստացվել:</p> <p>Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության հետ նախատեսված է նոր քննարկում արաջարկվող կանոնակարգերի ու հրահանգների մոտարկումը նոր ճանապարհային քարտեզում ներառելու համար:</p> <p>Արված դիտարկումների հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության կողմից համապատասխան լուծումները ներկայացնելուց հետո Փաթեթը կլրամշակվի և սահմանված կարգով կրկին կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>		
65	<p>«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացվող 5-ամյա Մաստեր պլանի հաստատման գործընթացի ապահովում, Մաստեր պլանի իրագործում, Կոնցեսիայի պայմանագրին կից ակտիվների ցանկերի ճշգրտում</p>	<p>65.1-65.2 Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի և ենթակառուցվածքների բարեկարգմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ /2021- 2026թթ./</p>	<p>«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության կողմից Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայանների ենթակառուցվածքների բարեկարգման և զարգացման շրջանակներում 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքների ցանկը՝</p> <p>1. Երևանի «Զվարթնոց» օդանավակայան</p> <ul style="list-style-type: none"> • Բեռնային համալիրի ընդլայնման նախագծում. • Օդանավակայանի մեկնման սրահի նոր կցակառուց՝ նոր սահնհանգույցներ, նստեցման հատված և բիզնես սրահ. 		

			<ul style="list-style-type: none"> • Աերոդրոմի «A» ղեկուղու և դրան հարող գլխավոր ղեկուղու հիմնանորոգում (աերոդրոմի նշված տարրերը շուրջ 40 տարի չեն շահագործվել)։ • Աերոդրոմի 10 – 14 և 28 – 32 կայանատեղերի հետնամասերում գտնվող գլխավոր ղեկուղու վերանորոգում. <ul style="list-style-type: none"> • Ավիավառելիքի պահպանման նոր տարողությունների (ռեգերվուարների) կառուցման մեկնարկ. • Օդանավակայանի ավիավառելիքի «Չարբախ» հիմնապահեստից մինչև «Կարմիր Բլուր» հիմնապահեստ երկաթգծի վերանորոգում. • Օդանավակայանի ավիավառելիքի «Չարբախ» հիմնապահեստի մուտքի տեղամասի բարեկարգում. • Վարչական տարածքի որոգման ջրագծերի և ավտոմատ ջրցանցի վերանորոգում. <ul style="list-style-type: none"> • Աերոդրոմի շահագործողական վիճակի պահպանման համար նախատեսված ավտոնտեսության գոտու վերանորոգում. • Աերոդրոմի վթարափրկարարային շենքի վերանորոգում. • Օդանավակայանի վճարովի ավտոկանգառի ուղղորդման համակարգի տեղադրում. 		
--	--	--	---	--	--

			<p>2. Շիրակ Օդանավակայան</p> <ul style="list-style-type: none"> • Օդանավակայանի նոր մեկնման սրահի կառուցում. 		
68	<p>Թոփչբային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացում՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթներին և, առավել հնարավոր չափով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության, և ավիացիայի ոլորտին առնչվող այլ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված միջազգային ստանդարտներին, առաջարկվող գործելաձևերին ու ընթացակարգերին դրանց</p>	<p>68.5 Կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորումների բարձրացում՝ տեսական և գործնական դասընթացների միջոցով /2021- 2026թթ./</p>	<p>2025 թվականի համար Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնագետների որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվել են տեսական և գործնական դասընթացներ:</p> <p>Համաձայն Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 11-ի N120-Ա հրամանով հաստատված Կոմիտեի աշխատակիցների 2025 թվականի մասնագիտական վերապատրաստումների պլանների՝ 30.12.2025թ. դրությամբ՝ կազմակերպվել են 44 դասընթացներ 63 մասնակիցների համար (աշխատողների մի մասը մասնակցել է մեկից ավել դասընթացի):</p>		

69	<p>Ընդհանուր նշանակության ավիացիայի անվտանգ զարգացում. անօդաչու թռչող համակարգերի, ինչպես նաև թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների շահագործման նոր ընթացակարգերի ընդունում</p>	<p>69.1 Անօդաչու թռչող համակարգերի շահագործման նոր ընթացակարգի ընդունում, անհրաժեշտ ուսուցումների և վերապատրաստումների համար թվային պլատֆորմների ստեղծում և ոլորտի վերահսկողության ապահովման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգերի ներդրում</p>	<p>Կնպաստի անօդաչու թռչող համակարգերի զարգացմանը և կկանոնակարգի դրանց անվտանգ շահագործումը: Քարտեզների մշակումը և թույլատրելի թռիչքային գոտիների սահմանումը հնարավորություն կտա ապահովել օդային տարածքի օգտագործման անվտանգությունը:</p>	<p>2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Կոմիտեի կողմից մշակվում է «Ավիացիայի մասին» օրենքում անօդաչու թռչող համակարգերի մասով համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը:</p>
		<p>69.2 Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների շահագործման նոր ընթացակարգերի ընդունում</p>	<p>Կնպաստի ընդհանուր նշանակության ավիացիայի զարգացմանը և կկանոնակարգի թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների անվտանգ շահագործումը: Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների վերաբերյալ ընթացակարգերի մշակման և իրականացման արդյունքում ներդրողների մոտ կառաջանա հնարավոր ներդրումներ իրականացնելու և ընդհանուր նշանակության ավիացիան զարգացնելու հետաքրքրություն:</p>	<p>2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>2025 թվականի ընթացքում «Ազատ» և «Մրգաստան» հարթակներին տրվել է շահագործման թույլտվություն:</p>
74	<p>Կառավարությունը «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի</p>	<p>74.2 Պայմանավորվածություն ձեռք բերել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի</p>	<p>Արդյունքում կունենանք ուղիղ ավիափոխադրումներ դեպի ԱՄՆ և հակառակ ուղղությամբ, կընդլայնվի թռիչքների աշխարհագրությունը, կաճի ուղևորափոխադրումների և</p>		

	<p>մասնակցությամբ բանակցություններ է վարելու աշխարհում առաջատար ավիաընկերությունների հետ՝ դեպի Հայաստան և Հայաստանից ավիափոխադրումներ իրականացնելու համար: Միաժամանակ բանակցություններ ենք վարելու հայաստանյան ավիաընկերությունների հետ՝ վերջիններիս գործունեության համար նպաստավոր միջավայր և պայմաններ ստեղծելու, ինչպես նաև մրցունակության բարձրացման ուղղությամբ:</p>	<p>հետ՝ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով</p>	<p>բեռնափոխադրումների ծավալները</p>		
77	<p>Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում</p>	<p>77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում /2021-2026 թվականներ/</p>	<p>Բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները շարունակական բարելավվել են: Վարձակալության պայմանագրով սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների (ջրամատակարարման շարունակականություն, ջրի որակ, չհաշվառված ջուր, բաժանորդների բավարարվածություն և այլն, նորմալ գործող ստանդարտներ), ինչպես նաև պայմանագրի այլ պահանջների ապահովման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-</p>		

			<p>ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ջրամատակարարման տևողությունը՝ (օրվա ընթացքում ջրամատակարարման ժամերի կշռված միջին տևողությունը) Երևան քաղաքում կազմել է 23,2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 21,5 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20,9 ժամ/օր: 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մատակարարվող ջրի որակը կազմել է 98.57%:</p>		
		<p>77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում</p> <p>/2021-2026 թվականներ/</p>	<p>2025 թվականին նախատեսվել է և իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս բնակավայրի խմելու ջրի գլխամասային հանգույցի (գետային ջրընդունիչ) և մաքրման կայանի կառուցման, գոյություն ունեցող ավազային մաքրման կայանի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում: Շինարարության իրականացման համար գումար չի հատկացվել:</p>		
		<p>77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի</p>	<p>Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում 2025 թվականի ընթացքում շարունակվել են ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված</p>		

		իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար /2021-2026 թվականներ/	սուբվենցիոն ծրագրերի իրականացումը: Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար Զրային կոմիտեն իր իրավասությունների շրջանակներում ներկայացրել է դիրքորոշում, անհրաժեշտության դեպքում՝ հաշվի առնելով նաև վարձակալ ընկերության կարծիքը:		
--	--	---	---	--	--

		<p>77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում /2021-2026 թվականներ/</p>	<p>Համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի՝ ընկերության սպասարկման տարածքում բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավման գործընթացը շարունակական է: Ընկերության սպասարկման տարածքում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» սանիտարական կանոնները և նորմերը՝ N2-III-Ա2-1» N876 հրամանով հաստատված գործող նորմերին համապատասխան: Ջրային կոմիտեն՝ ամսական կտրվածքով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունն ուղարկում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն՝ իր սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում</p>		
--	--	--	---	--	--

			<p>արձանագրված շեղումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով: 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մատակարարվող ջրի որակը կազմել է 98.57%:</p>		
--	--	--	--	--	--

		<p>77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լուրջ կայանների և սարքավորումների տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում /2024-2026 թվականներ/</p>	<p>2025 թվականին Ասիական Ջարգացման Բանկի կողմից նախատեսված Սևանա լճի ափին գտնվող Գավառ, Մարտունի ու Վարդենիս համայնքներում գործող թվով 3 կեղտաջրերի մաքրման կայանների (այսուհետ՝ ԿՄԿ) արդիականացմանը վերաբերող աշխատանքների պլանավորման գործընթացներն ավարտման փուլում են: Ասիական Ջարգացման Բանկի (ԱՋԲ) «Լուծումներ, որոնք նպաստում են Սևանա լճի բնապահպանական կայունությանը և աղետների նվազեցմանը» TA 10148-ARM տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են Սևանի ավազանի կեղտաջրերի հեռացման համակարգի նախնական նախագծում և մաքրման կայանների արդիականացման ծախսերի գնահատում: Աշխատանքների պլանավորման գործընթացները ներառում են՝ Սևանա լճի ավազանի կեղտաջրերի հեռացման համակարգերի նախնական նախագծերի, ինչպես նաև 3 ԿՄԿ-ների արդիականացմանը վերաբերող տեխնիկատնտեսական հաշվետվությունների և հանրային ներդրումային փաթեթի ձեռքբերման գործընթացներ:</p>		
--	--	---	---	--	--

		<p>77.9. Կոյուղու ցանցին զմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում /2024-2026 թվականներ/</p>	<p>2025թ. ԱԶԲ-ի հետ, ի թիվս նախատեսված աշխատանքների, քննարկվել է նաև Սևանի ավազանում գտնվող տնտեսավարողների օբյեկտներից հեռացվող կեղտաջրերի ուսումնասիրության և դրանց մաքրման իրագործելիությանը վերաբերող հարցեր: Ջրային կոմիտեն շահագրգիռ գերատեսչությունների հետ իրականացնում է համատեղ աշխատանքներ՝ Սևանա լճի ափամերձ տարածքում կենտրոնացված կոյուղու ցանցին զմիացված տնտեսավարող սուբյեկտների լոկալ մաքրման կայանների հնարավոր տեղադրման ուղղությամբ:</p>		
--	--	--	---	--	--

		<p>77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների իրականացում /2023թ. դեկտեմբերի 2- րդ տասնօրյակ/</p>	<p>ՀՀ կառավարության 01.06.2023թ. N 877-Ա որոշման հիման վրա «ՀԵԾ-II, փուլ-3» ծրագրի ԼՈՏ-1, ԼՈՏ-2, ԼՈՏ-3 բաղադրիչների պայմանագրային ժամկետները երկարաձգվել են մինչև 31.05.2024թ.:</p> <p>ՀՀ կառավարության 30.05.2024թ. N 820-Ա որոշման հիման վրա ԼՈՏ- 3 բաղադրիչի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2024թ., իսկ ԼՈՏ-1, ԼՈՏ-2 բաղադրիչների պայմանագրային ժամկետները երկարաձգվել են մինչև 30.11.2024թ.: ԼՈՏ-2 բաղադրիչի թերությունների վերացման ժամկետը ավարտվել է 30.11. 2025թ, խորհրդատուի կողմից պատրաստվում է պայմանագրի ավարտական զեկույցը: ԼՈՏ-1 և ԼՈՏ-3 բաղադրիչների համար 30. 11.2025թ-ից սկսվել է 1 տարի թերությունների վերացման ժամկետը: Ծրագրով ընդհանուր առմամբ նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքները. ջրատարի կառուցում -63,6 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում -504,7 կմ, տնային մուտքագծերի կառուցում -185,5 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 17714 հատ, կոյուղագծերի կառուցում – 31,3 կմ: 01.12.2025թ. դրությամբ իրականացվել են.</p>		
--	--	--	---	--	--

			<p>ջրատարի կառուցում -64,0 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում - 510,0 կմ, տնային մուտքագծերի կառուցում -207,3 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 17548 հատ, կոյուղագծերի կառուցում – 29,5 կմ: Այդ թվում 2025թ. ընթացքում իրականացվել են.</p> <p>բաշխիչ ցանցի վերակառուցում - 2,9 կմ, տնային մուտքագծերի կառուցում -11,0 կմ, անհատական ջրաչափական հանգույցների տեղադրում- 3773 հատ:</p> <p>Լոտ-3 ծրագրով հայտարարվել է աշխատանքների ժամանակավոր կասեցում 112 օր առավելագույն ժամկետով՝ կապված Մարտունի համայնքի Գեղիովիտ բնակավայրում ջրաչափերի տեղադրման խնդրի և էլեկտրամատակարարման տեխսպայմանների ձեռք բերման ու հողիատկացումների հետ, ինչպես նաև Մուխութության-Թասիկ ջրատարի 4,3կմ վթարային վիճակում գտնվող հատվածի փոխարինման հետ, որից հետո միայն հնարավոր կլինի իրականացնել ծրագրում ներառված Տոլորս, Թասիկ և Հացավան բնակավայրերի ջրամատակարարումը:</p>	
--	--	--	--	--

78	<p>Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ</p>	<p>78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ոռոգմավարական ծրագրի» մշակում և իրականացում /2022-2023 թվականներ/</p>	<p>«Ջրային ոլորտի ոռոգմավարական ծրագրի հայեցակարգը սահմանելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը՝ շահագրգիռ գերատեսչությունների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա լրամշակվել է:</p> <p>Հայեցակարգը աշխատանքային կարգով քննարկվել և վերջնականացվել է «Ջրային ոլորտի ոռոգմավարության մշակման, ոլորտում արձանագրված խնդիրների և դրանցից բխող գործողությունների ծրագիր» մշակելու նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում: Հայեցակարգը նախատեսվում է քննարկել Վարչապետի գլխավորությամբ հրավիրվելիք խորհրդակցության շրջանակներում:</p> <p>Միաժամանակ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 14-ի N 02/08.2/20763-2025 հանձնարարականով տրված ՀՀ վարչապետի աշխատակազմի ստորաբաժանումների եզրակացությունների շրջանակներում ՀՀ փոխվարչապետի խորհրդականի կողմից առաջարկվել է</p>		
----	--	---	---	--	--

			<p>Հայեցակարգի նախագիծը չներկայացնել Վարչապետի որոշմամբ հաստատման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N252-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1342-L որոշմամբ սահմանված դրույթները:</p> <p>«Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակումը ներառված է նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրակմամբ իրականացվող՝ «Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» (IADAAM) Ծրագրում, որը իրականացվում է Ծրագրի 1. 2 բաղադրիչի, 1.2.1 Ենթաբաղադրիչի (Պետական քաղաքականություն և բարեփոխումներ՝ ուղղված ջրային ռեսուրսների կառավարմանը և ոռոգման արդյունավետություն) Հանձնարարություն 1-ի ներքո («Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և դրա իրականացման միջոցառումների ծրագրի կազմում): Ծրագիրն</p>		
--	--	--	---	--	--

			իրականացվում է «Ամպերա» ՍՊԸ-ի և «Ուրբան» Կայուն զարգացման հիմնադրամ»-ի կողմից:		
79	Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում	79.2.Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում /2023-2025 թվականներ/	ՄԱԿ-ի ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող «Անցում» ցածրաձխածնային ոռոգման տեխնոլոգիաների Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արտադրողականության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար ծրագրի շրջանակներում ստեղծվել է ԷԼ.հարթակ համապատասխան սերվերային համակարգի վրա, որը գործարկվել է 2025 թվականին, սակայն ջրօգտագործողների ընկերությունների և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրառի կետերում և ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում տեղադրված ջրաչափական սարքավորումների տվյալների օնլայն դիտման հնարավորություն դեռևս ապահովված չէ, քանի որ դեռևս աշխատանքներ են կատարվում հարթակն անհրաժեշտ տեղեկատվությամբ համալրելու համար:		
80	Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի	80.1.Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել	Համաշխարհային բանկի WISE ծրագրի Բաղադրիչ 1.1-ով (Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման հզորացում)		

	<p>գնահատում և բարելավում</p>	<p>կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ /2022-2026 թվականներ/</p>	<p>ռոռզման գլխավոր հատակագծի մշակման նպատակով նախատեսվում է համակարգի մանրամասն գույքագրում՝ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման շրջանակներում:</p> <p>«Ոռոզվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի Ջրային բաղադրիչով նախատեսված է իրականացնել պետական սեփականություն հանդիսացող ռոռզման համակարգերի չափագրության, քարտեզագրման, տեխնիկական գնահատման և վերականգնման կարիքների գնահատման աշխատանքներ: Մրցույթի արդյունքում ընտրված «ԱՄՊԵՐԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայումս իրականացվում են ՀՏԿ-ների քարտեզագրման, չափագրման և դրանց փաստացի վիճակի գնահատման աշխատանքներ:</p>		
		<p>80.2.Իրականացնել ռոռզման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն /2022-2026 թվականներ/</p>	<p>2025 թվականին իրականացվել է 16 օբյեկտների հիմնանորոգման շինարական աշխատանքներ, որից 9-ի շինարարությունն ավարտվել է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Թալին 1 պոմպակայանի վերանորոգում, 2) «Քաղցրաշեն 1 պոմպակայանի N 5 պոմպի մղման խողովակաշարի 		

			<p>հատվածի» վթարային հատվածի վերանորոգում,</p> <p>3) Քաղցրաշեն 1 պոմպակայանի N 1 մղման խողովակաշարի վթարային հատվածի վերանորոգում,</p> <p>4) Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքի ներքին ցանցի մոտ 880 մետր հատվածի հիմնանորոգում,</p> <p>5) Յաղդան պոմպակայանի (Յաղդանի բնակավայր) հիմնանորոգում,</p> <p>6) «Հերմոն-Ելփին» ինքնահոս ջրատարի «Ռինդ-Արենի» տեղամասի հիմնանորոգում,</p> <p>7) Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների, ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում,</p> <p>8) Ղարաղալայի պոմպակայանի մղման խողովակաշարի վթարային հատվածների վերակառուցում,</p>		
--	--	--	--	--	--

			<p>9) «Արագափ-1» ջրհան կայանի երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վերակառուցում:</p> <p>3 աշխատանքներ նախատեսվում է ավարտել մինչև տարեվերջ՝</p> <p>1) «Գետափ-Եղեգնաձոր» ջրանցքի հիմնանորոգման աշխատանքները,</p> <p>2) Արագափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքներ (1-ին փուլ),</p> <p>3) Արտամետի «Ձույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցման աշխատանքներ,</p> <p>4) «Սյունիք» ԶՕԸ-ի կողմից շահագործվող Արաքս 1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքներ:</p> <p>3 օբյեկտների մասով աշխատանքները կիրականացվեն մոտ 90 տոկոսով և կավարտվեն 2026 թվականի 1-ին եռամսյակում՝</p> <p>1) Աշտարակի մայր ջրանցքի 2 կմ (ՊԿ0+00-ՊԿ20+00) հատվածի վերանորոգման աշխատանքներ,</p>		
--	--	--	--	--	--

			<p>2) «Տավուշ» ԶՕԸ-ի կողմից ապասարկվող Ձեյթուն N1 պոմպակայանի կարճ գծի հեռացնող ջրանցքի հիմնանորոգման աշխատանքներ,</p> <p>3) Արագափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքներ (1-ին փուլ):</p> <p>ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի մայր ջրանցքի Հարթաշենի դյուկերի վթարված հատվածի կառուցման աշխատանքները դեռևս չեն մեկնարկել:</p> <p>Արենի-Խաչիկ եռաստիճան պոմպակայանի և Սարալանջի 7/1 պոմպակայանի հիմնանորոգման աշխատանքների նախագծերը ստացել են քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական եզրակացությունները և պատրաստ են շինարարության:</p>		
81	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1. Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում / 2022-2023 թվականներ շարունակական/	<p>Միջոցառումն իրականացվել է «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում՝ Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ:</p> <p>Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018 թվականին, իրականացվել սահմանված ժամկետներում և ավարտվել 2025 թվականի հունիսի 30-ին:</p>		

			<p>Հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է միջտնտեսային մեկ ջրանցքի վերջին 1.35 կմ երկարությամբ վթարային հատվածը: Ծրագրով ընդհանուր առմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> • կառուցվել է ինքնահոս ոռոգման 7 համակարգ՝ 37.4 կմ, • վերականգնվել են 4 մայր և 50 միջտնտեսային ջրանցքների 135.8 կմ ծայրահեղ վնասված և վթարային հատվածներ, 111 բնակավայրում հիմնանորոգվել են 279.0 կմ ընդհանուր երկարությամբ ոռոգման ներտնտեսային համակարգեր: 		
82	<p>2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում</p>	<p>82.1.«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում /2021-2026 թվականներ/</p>	<p>Շարունակվել են 2023 թվականին մեկնարկած Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես՝ Ավարտվել են Շինարական ճամբարի հիմնման, Ախուրյան գետի ջրահեռացման խրամուղու փորման և բետոնացման, առաջին փուլի ջրաձածկման տարածքի ծառերի հատման և բուսաշերտի տեղափոխման, Ախուրյան գետի հունի տեղափոխման նպատակով հիդրոմեխանիկական սարքավորումների տեղադրման, հավելյալ ցեմենտացիոն աշխատանքները, վաղ ազդարարման համակարգի 28 շաղկների տեղադրման, ոռոգման թունելի մուտքամասի և ելքամասի ամրակայման աշխատանքները:</p>		

			Ներկայումս իրականացվում են հատակային ջրթողի մուտքամասի համար հորատաբետոնե եղանակով ցցապատի կառուցման աշխատանքները:		
		82.2. «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում /2021-2024 թվականներ/	Փուլ 1-ի ֆինանսական դեֆիցիտը ծածկելու նպատակով «Զրային ռեսուրսների համալիր կառավարում (ԶՌՀԿ)/Ախուրյան գետ, Փուլ 2» (BMZ N° 2012 66 956) ծրագրի միջոցներն ուղղվել են Կապսի ջրաբարի շինարարությանը:		
		82.3.Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ /2021-2025 թվականներ /	2024 թվականին աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: 2025 թվականի ապրիլ-մայիսին կատարվել է առաջին ջրալցումը:		
83	Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների	83.1.Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2021-2026 թվականներ/	ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ժամանակավորապես դադարեցված են (գտնվում են դադարի փուլում)՝ ջրամբարի նախնական ընտրված		

	<p>ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն</p>		<p>տեղամասում առկա «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ին պատկանող ՀԷԿ-ի օրվա կարգավորման ջրամբարի առկայությամբ պայմանավորված, որի պատճառով անհնարինություն է առաջացել ջրամբարի նախատեսվող տարածքում իրականացնել համապատասխան հետազոտություններ:</p>		
	<p>83.2.Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2021-2026 թվականներ/</p>		<p>Գեղարքունիքի մարզի Աստղաձորի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ավարտվել են, ներկայումս գտնվում են համալիր փորձաքննության փուլում: Հանրային ներդրումային կոմիտեի ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Աստղաձորի ջրամբարի ներդրումային ծրագիրը:</p>		
	<p>83.3.Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>		<p>Վայոց ձորի մարզի Ելփինի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար ստացվել է համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: Հանրային ներդրումային կոմիտեի 2025թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Ելփինի ջրամբարի ներդրումային ծրագիրը:</p>		

		<p>83.4.Վայոց ձորի Ինձորուտի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070- 2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>		
		<p>83.5.Վայոց ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070- 2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր</p>		

			<p>պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p> <p>Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>		
	<p>83.6. Վայոց ձորի Խաչիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p> <p>Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>			
	<p>83.7. Վայոց ձորի մարզում Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և</p>			

			<p>նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնել է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p> <p>Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>		
		<p>83.8. Վայոց ձորի մարզում Ջիրակի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p>		

			<p>Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>		
<p>83.9. Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>Ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար ստացվել է համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: Հանրային ներդրումային կոմիտեի 2025 թվականի հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Քասախի ջրամբարի ներդրումային ծրագիրը:</p>				
<p>83.10. Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070-2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>				

		<p>83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070- 2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնել է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը: Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>		
		<p>83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 04/5-2/27070- 2025 գրությամբ ջրամբարի տեխնիկատնտեսական, իրագործելիության ուսումնասիրությունների և նախագծման աշխատանքների գործընթացների մեկնարկի վերաբերյալ հայտնում է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ ունեցած վերջին քննարկումների ընթացքում Բանկը կրկին վերահաստատել է իր</p>		

			<p>պատրաստակամությունն աջակցելու ծրագրի շրջանակներում իրագործելիության ուսումնասիրությունների իրականացմանը:</p> <p>Առաջիկայում նախատեսվում է Բանկի աջակցությամբ մեկնարկել ջրամբարի հետազոտությունները:</p>		
		<p>83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>«Շիրակի մարզի Արթիկի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ավարտվել են, ներկայումս գտնվում են համալիր փորձաքննության փուլում:</p> <p>Հանրային ներդրումային կոմիտեի ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Արթիկի ջրամբարի ներդրումային ծրագիրը:</p>		
		<p>83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/</p>	<p>Գերմանիայի կառավարությունը «կառավարությանն առաջարկում է երկկողմ պաշտոնական զարգացման աջակցության շրջանակում առկա վարկային պարտավորությունների փոխարկում՝ մինչև 23 միլիոն եվրոյի չափով: Պարտքի փոխարկումը կարող է տեղի ունենալ ի նպաստ կլիմայի, էներգետիկայի, արդար փոխակերպման, կենսակայուն տնտեսական զարգացման կամ բնական ռեսուրսների, կենսաբազմազանության պաշտպանության ոլորտներում</p>		

			ներկայացվելիք ծրագրերի: Այս համատեքստում, Ջրային կոմիտեն առաջարկել է Խնձորեսկի ջրամբարի նախագծման և կառուցման ծրագրային առաջարկը ներկայացնել որպես պարտքի փոխարկման գործիքի շրջանակում նախատեսվող համագործակցային ծրագիր:		
		83.15. Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում /2022-2026 թվականներ/	Սյունիքի մարզի Լիճքի (Մեղրի) ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ավարտվել են, ներկայումս գտնվում են համալիր փորձաքննության փուլում Հանրային ներդրումային կոմիտեի ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստում քննարկվել և հաստատվել է Լիճքի ջրամբարի ներդրումային ծրագիրը:		
		83.17. Հերիերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում /2021- 2026թթ. (Շինարարության ավարտ 2027թ.)/	Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նպատակով դեռևս 2019 թվականին, ձեռք է բերել ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերը: Ծրագրի իրականացման նպատակահարմարության և արդյունավետության վերաբերյալ տեղի են ունեցել քննարկումներ, այդ թվում նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում, տեղում՝ Հեր-հերի ջրամբարի տարածքում		

			<p>իրականացվել են ուսումնասիրություններ:</p> <p>«Վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա՝ շահագրգիռ կողմերի քննարկումների արդյունքներով վերջնականացվել է Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցման ծրագիրը: Ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության 09.02.2023թ-ի N 175-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:</p> <p>«Վայոց ձորի մարզի «Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում» հանրային ներդրումային ծրագրի նախագծի լրամշակված տարբերակը 2025 թվականի հոկտեմբերի 29-ի N 01/15/5515-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ հաշվի առնելով վերջինիս կողմից ներկայացված դիտարկումները: Նախագիծը ներկայումս գտնվում է ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ քննարկման փուլում, որը առաջիկայում կներկայացվի Հանրային ներդրումային կոմիտեի նիստի քննարկմանը:</p>		
		<p>83.19. Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում, վերակառուցում և նախապատրաստական</p>	<p>Համալիր փորձաքննության դրական եզրակացություն ստանալու նպատակով թվով 14 ՕԿՋ-երի ՆՆՓ-երն ուղարկվել է Քաղաքաշինության կոմիտե: 2025</p>		

		<p>աշխատանքների իրականացում /2022-2025 թվականներ/</p>	<p>թվականին պետական համալիր փորձաքննության դրական եզրակացություն են ստացել թվով 11 ՕԿՋ-ների ՆՆՓ-ներ, որոնցից 5-ի մասով շինարարական աշխատանքները մեկնարկել են և գտնվում են ավարտական փուլում, իսկ ևս 2-ը մրցութային գործընթացներն ավարտվել են և կնքվել են շինարարական աշխատանքների պայմանագրեր:</p>		
		<p>83.20. Արագածոտնի մարզում Գառնահովիտի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում /2024-2026 թվականներ/</p>	<p>Գառնահովիտի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարված մրցութի արդյունքում, ուսումնասիրություններն իրականացվում են «Հիդրոսուլուշնս» ՍՊԸ և «AFRY Switzerland Ltd.» (այսուհետ՝ Խորհրդատու) համատեղ կոնսորցիումի կողմից: Խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, ելակետային տվյալների ձեռքբերման դժվարություններով, ինչպես նաև ուսումնասիրությունների ընթացքում առաջ եկած որոշ խնդիրներով պայմանավորված՝</p>		

			<p>ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը:</p>		
		<p>83.21. Տավուշի մարզում Կարմիր գյուղի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում /2024-2026 թվականներ/</p>	<p>Կարմիր գյուղի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարված մրցույթի արդյունքում, ուսումնասիրություններն իրականացվում են «Հիդրոսուլուշնս» ՍՊԸ և «AFRY Switzerland Ltd.» (այսուհետ՝ Խորհրդատու) համատեղ կոնսորցիումի կողմից: Խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, ելակետային տվյալների ձեռքբերման դժվարություններով, ինչպես նաև ուսումնասիրությունների ընթացքում առաջ եկած որոշ խնդիրներով պայմանավորված՝ ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը:</p>		

		<p>83.22. Լոռու մարզում Գետիկի ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և նախագծային փաստաթղթերի կազմում /2024-2026 թվականներ/</p>	<p>Գետիկի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, Ասիական զարգացման բանկի կողմից հայտարարված մրցույթի արդյունքում, ուսումնասիրություններն իրականացվում են «Հիդրոսուլուշն» ՍՊԸ և «AFRY Switzerland Ltd.» (այսուհետ՝ Խորհրդատու) համատեղ կոնսորցիումի կողմից: Խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, ելակետային տվյալների ձեռքբերման դժվարություններով, ինչպես նաև ուսումնասիրությունների ընթացքում առաջ եկած որոշ խնդիրներով պայմանավորված՝ ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի հետ կնքված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը:</p>		
84	<p>«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում</p>	<p>84.1.Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և</p>	<p>2024-2025 թվականներին նախատեսված ընդհանուր 244.7 մ երկարությամբ առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները ավարտվել են: 2025 թվականին ձեռք են բերվել նախագծանախահաշվային</p>		

		<p>շինարարական աշխատանքների իրականացում /2024-2026 թվականներ (շարունակական)/</p>	<p>փաստաթղթեր, որոնք անցել են պարզ փորձաքննություն և ներկայացվել են համալիր փորձաքննության: Ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերով 2026-2027 թվականներին կմեկնարկեն հիմնանորոգման շինարարական աշխատանքները:</p>		
85	<p>Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում</p>	<p>85.1.Կոլեկտորադրենաժայի ն ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում /2021 թվական (շարունակական)/</p>	<p>«2025 թվականի պետական բյուջեի «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման շուրջ 175.5 կմ երկարությամբ աշխատանքներ, իսկ խնայված միջոցների հաշվին՝ ևս շուրջ 43.7կմ:</p> <p>Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվել են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:</p>		
86	<p>Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում</p>	<p>86.1.Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների</p>	<p>Ավարտվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ և Առափի բնակավայրերի Ախուրյան գետի հունի մաքրման աշխատանքները:</p> <p>Ընթացքի մեջ են ՀՀ Շիրակի մարզի Արթիկ-Նոր Կյանք համայնքների հեղեղատարի վերին տեղամասի մաքրման և կարգավորման շինարարական աշխատանքները:</p>		

		<p>իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում /2024-2026 թվականներ (շարունակական)/</p>	<p>Ավարտվել են 3 աշխատանքների՝ ՀՀ Արագածոտնի մարզում Ռիա-Թագա համայնքի երկու հեղեղատարների մաքրման և կարգավորման, ՀՀ Արմավիրի մարզում Մեծամոր գետի 250 մ երկարությամբ ավապատնեշի բարձրացման և Մեծամոր գետի 620 մ ընդհանուր երկարությամբ հատվածներում հունի մաքրման, ՀՀ Շիրակի մարզի Վարդաքար համայնքի բետոնապատ հեղեղատարի մաքրման և կարգավորման աշխատանքներ, Նոր Կյանք համայնքի հեղեղատարի մաքրման և կարգավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գործընթացները: Ընթանում են ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Այրում և Հաղթանակ բնակավայրերի տարածքում Դեբեդ գետի հունի մաքրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գործընթացը: ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանների միջակայքում Արաքս գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի</p>		
--	--	---	--	--	--

			մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ 130 մետր երկարությամբ և 8 մետր խորությամբ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքների նախագծային փաթեթները Թուրքական կողմի հետ համաձայնեցման փուլում են:		
87	Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում	87.1. Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակներ, պոմպակայաններ, շենքեր, շինություններ, մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում /2021-2026 թվականներ/	Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի Ջրային բաղադրիչով նախատեսված է իրականացնել պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերի չափագրության, քարտեզագրման, տեխնիկական գնահատման և վերականգնման կարիքների գնահատման աշխատանքներ: Մրցույթի արդյունքում ընտրված «ԱՄՊԵՐԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայումս իրականացվում են ՀՏԿ-ների քարտեզագրման, չափագրման և դրանց փաստացի վիճակի գնահատման աշխատանքներ:		
88	Գործող ջրամբարների պատշաճ շահագործում	88.1.Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ /2024-2026 թվականներ (շարունակական)/	Ընթացքի մեջ են Սառնաղբյուր, Այգեձոր, Սևաբերդ ջրամբարների վերականգնման համար նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:		

		<p>88.2.Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակում</p> <p>/2021-2026 թվականներ/</p>	<p>Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի կողմից իրականացվել են ՀՀ Տավուշի մարզի Այգեձորի ջրամբարի տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ, ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի ջրամբարի պատվարի անվտանգ շահագործման նպատակով՝ հիդրոտեխնիկական կառուցվածքներում ընթացող պրոցեսների վտանգավորության աստիճանը պարզելու ուսումնասիրություններ:</p>		
107	Ռեսուրսների ուսումնասիրում և համաչափ արդյունահանման ապահովում	<p>107.1 «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում</p> <p>/2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ/</p>	<p>107.1 կետով նախատեսված «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի ընդունման ժամկետ է սահմանվել 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակը: Հետևաբար նշված օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են մշակվել և ընդունվել օրենքի ընդունումից հետո:</p>		